Azg
Azg
armenian daily

Նոյեմբեր 27 Ուրբաթ 1992

օրաթերթ
Բ տարի, թիւ 137 (229)
գինը 2 ռ.
դասիչ 69149

Երեւան 375010
Հանրապետութեան 47

հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

Շրջափակում

Մեղրի-Զանգելան երթեւեկությունը կվերսկսվի

Ինչպես «Նոյյան տապան» գործակալությանը հաղորդեցին Մեղրու շրջանի պարեսպանից, երկաթգծի Մեղրի-Զանգելան հատվածում շարունակվում են վերանորոգման աշխատանքները: Սպասվում է, որ մոտ օրերս կվերսկսվի երթեւեկությունը: Հայաստանի կառավարության մամուլի ծառայության ղեկավար Վլադիմիր Մանոյանը հայտնեց, որ այդ հատվածում գտնվող կամրջի վերանորոգման աշխատանքները պետք է ավարտվեին դեռեւս երեկ, նոյեմբերի 26-ին: Նա հայտարարեց նաեւ, թե երթեւեկության վերսկսման ճշգրիտ ժամկետն անհայտ է, քանի որ այն կախված է ոչ միայն հայկական, այլ նաեւ ադրբեջանական կողմից: Ինչպես հայտնի է, երթեւեկության կանոնավորման վերաբերյալ բազմաթիվ պարտավորություններ եւ գործնական քայլեր խափանվում են ադրբեջանական կողմի, մեղմ ասած, անպարտաճանաչության պատճառով: ■

ՀՀ

Հանդիպում վարչապետի հետ

Վարչապետ Խոսրով Հարությունյանը երեկ ընդունեց այցելությունը ՀՌԱԿ Հանրապետական վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանի եւ նույն վարչության անդամ Հակոբ Ավետիքյանի: Հանրապետության սոցիալ-տնտեսական ներկա վիճակի մասին կարծիքներ փոխանակելուց հետո ՀՌԱԿ-ի ներկայացուցիչները որոշ առաջարկներ ներկայացրին արտասահմանյան օտար թե հայկական նոր օգնություններ ստանալու հնարավորությունների մասին: Վարչապետն ընդունելով այդ առաջարկները, խոստացավ անհրաժեշտ ուսումնասիրություններից հետո ընթացք տալ դրանց: ■

Քաղխորհուրդ

Պատգամավորների գործունեությունը դադարեցված

Երեկ Երեւանի քաղխորհրդի հերթական նիստում կրկին գործկոմի ձեւավորման բազմաչարչար հարցն էր դրված: Առավոտյան պատգամավորները ներկայացրին իրենց հարցադրումները քաղաքային դատախազությունից եւ Գերագույն խորհրդի տեղական ինքնակառավարման հարցերի հանձնաժողովից ստացված պատասխանները: Հարցը վերաբերում էր կարգադրություններով քաղաքը կառավարելուն եւ առանց խորհրդի համաձայնության պատգամավորներ պահելուն: Գերագույն խորհրդի հանձնաժողովից ստացված պատասխանը հետեւյալն էր. «Պրն. Գալստյանը գերազանցել է իր լիազորությունները, նշանակելով քաղխորհրդի նախագահի տեղակալի պատգամավորներ: Ըստ օրենքի գործկոմի պատգամավորները պետք է ներկայացվեն խորհրդի հերթական նստաշրջանի հաստատմանը: Հետեւաբար այդ պատգամավորների իրենց պատգամավորությունը, որոնք չեն ներկայացվել նստաշրջանի հաստատմանը, անօրինական է»:

Քաղխորհրդի նախագահ Համբարձում Գալստյանն արդեն որերորդ անգամ ներկայացրեց գործկոմի նույն կազմը եւ առաջարկեց քաղխորհրդին հաստատել այն: Սակայն թեկնածությունները քվեարկիկ մցնելու առաջարկը խորհուրդը մերժեց:

Խորհրդի նիստում ծավալվող հետագա իրադարձություններն ավելի դրամատիկ բնույթ ստացան: Առաջին տեղակալի թեկնածու պրն. Ռուբինյանը ծրագրային ելույթի փոխարեն հանդես եկավ իր թեկնածությունը քննարկումից հանելու խնդրով, միտք ձեւակերպելով՝ «ես ավարտեց ինչպես բազավորեմ»: Եւ քանի որ նախատես խորհրդում որոշում էր ընդունվել արգելել նախագահին կարգադրություններով գործելու, դադարեցվել էր գործկոմում պատգամավորների գործունեությունը: Ուստի առկա էր փակուղային իրավիճակը: Խորհուրդն առաջարկեց փակուղուց ելք գտնելու հաջող նիստին հանրապետության ղեկավարներին հրավիրելով: ■

ԴԱՐԱԲԱՂՈՒՄ ՏԱՐՕՐԻՆԱԿ ԼՈՒԹՅՈՒՆ Է

Լաչինում հայկական ուժերի հակահարձակումը շարունակվում է

Ինչպես հաղորդում է «Սնարf» գործակալությունը, Լեռնային Ղարաբաղում տարօրինակ լռություն է: Անցաստելիորեն լռել են տանկերը, հրանոթները ու «Գրադ» կայանքները, ադրբեջանական ռազմական ինքնաթիռները ձեռնպահ են մնացել հայկական խաղաղ բնակավայրերը ռմբակոծելուց: Եւ այնուամենայնիվ, ինչպես հայտնել է ԼՂՀ լրատվության եւ մամուլի պետվարչության ղեկավար Մարսել Պետրոսյանը, հարաբերական հանգիստն ամենայն հավանականությամբ ժամանակավոր բնույթ է կրում: Ադրբեջանական կողմը նախկինում նույնպես իրեն նման դաղարներ է թույլ տվել, որոնք, որպես կանոն, բացատրվել են ուժերի վերադասավորմամբ: Թե ինչպես կլինի այս անգամ, ժամանակը ցույց կտա:

Ղարաբաղի «Նորություններ» գործակալությունը նույնպես հաստատում է, որ նախորդ երկու օրերին իրադրությունը համեմատաբար հանգիստ է եղել, ավելացնելով, որ Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղի մոտ դիրքային մարտերը շարունակվել են: Ադրբեջանի զանգվածային լրատվության միջոցները հերթական անգամ թյուրիմացության մեջ են գցել իրենց ժողովրդին՝ հայտարարելով, թե նոյեմբերի 24-ին ադրբեջանական կազմավորումներն ազատագրել են Մարտակերտի շրջանի Սրխավենդ գյուղը: ԼՂՀ պաշտպանության նախարարությունը հերքել է այդ հայտարարությունը՝ տեղեկացնելով, որ Սրխավենդ գյուղը երբեք չի գրավվել ադրբեջանցիների կողմից: Նոյեմբերի 20-ին գյուղի վրա լայնածավալ գրոհ իսկապես եղել է, բայց այն ետ է մղվել հայկական ինքնապաշտպանական ուժերի կողմից:

Ինչպես հաղորդում են Հայաստանի պաշտպանության նախարարությունից, նոյեմբերի 25-ին եւ լույս 26-ի գիշերը մարտական գործողություններ են ծավալվել Լաչինի մարդասիրական միջանցքի հյուսիս-արեւելյան մասույցներում: Անցնելով հակահարձակման՝ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը բենամուն դուրս են մղել Դալիդաղ, Նուրադին եւ Վաղազին կոչվող տեղամասերի մարտավարական կարեւոր նշանակություն ունեցող դիրքերից: Մանրամասնությունները ճշտվում են:

Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհը գործում է անխափան: ■

Ղարաբաղում նոր տիպի հրթիռներ

Ինչպես Ստեփանակերտից հաղորդում է մեր թղթակից **Վահրամ Աղաջանյանը**, երեկ ադրբեջանական ռազմական ինքնաթիռը գնդիկավոր ռումբեր է նետել Լաչինի շրջանի հայկական պաշտպանական դիրքերի վրա: Տուժածների մասին տեղեկություններ չկան:

Նա տեղեկացնում է նաեւ, թե ադրբեջանական բանակը սկսել է օգտագործել նոր, ըստ երեւույթին «երկիր-երկիր» կամ «երկիր-օդ» հրթիռներ: Նոյեմբերի 24-ին Ասկերանի շրջանի տարածքում գտնվել են նոր տիպի հրթիռների բեկորներ: Մինչ այդ, հետախուզական տվյալների համաձայն, երկու այդպիսի հրթիռներ են պայթել Աղդամի շրջանի տարածքում: ■

Սահմաններում հանգիստ է

Ինչպես տեղեկացնում են Հայաստանի պաշտպանության նախարարությունից, նոյեմբերի լույս 26-ի գիշերն իրադրությունը հայ-ադրբեջանական սահմանում համեմատաբար հանգիստ է եղել: Համաձայն Ղարաբաղի «Նորություններ» գործակալության տվյալների, իրադրությունը լարված է մնում Կաղանի շրջանում, որտեղ Ադրբեջանի Զանգելանի շրջանի տարածքից ավբոդջ գիշեր հրետակոծվել է Սյունիք գյուղը: Հայկական կողմից պատասխան կրակ է բացվել բենամու հրետանային հենակետերը ոչնչացնելու նպատակով: Հայկական կողմից տուժածների մասին տեղեկությունների չկան: ■

Հելսինկիում երեկ տված մամուլի ասուլիսում Զվիադ Գամսախուրդիան ներկաներին վստահեցրեց, թե վերադառնալու է Վրաստան եւ իշխանության: Նա բացառեց ներկա իշխանության ղեկավարների հետ որեւէ համագործակցություն, ավելացնելով, թե ինքը Վրաստանի օրինականորեն ընտրված նախագահն է եւ մնում է այդպիսին: Գամսախուրդիան Վրաստանի այժմյան վիճակի եւ իրեն արտաքսելու մեջ մեղադրեց Արեւմուտքին եւ Ռուսաստանին: ■

Բաքու-Անկարա

Ադրբեջանը նոտա է հղել Թուրքիային

Ադրբեջանի արտգործնախարարությունը նոտա է հղել Թուրքիայի արտգործնախարարությանը, որի մեջ խնդրում է պարզաբանել Անկարայի դիրքորոշումը Հայաստանին էլեկտրաէներգիա մատակարարելու որոշման կապակցությամբ: Այդ մասին նոյեմբերի 25-ին «ԻՏԱ»-ին տված հարցազրույցում հաղորդեց Ադրբեջանի արտգործնախարար Թոֆիկ Ղասիմովը: Նոտայում տարակուսանք է հայտնվում այն առթիվ, որ Անկարան այդ դիրքորոշումն, ընդունելով է առանց Բաքվի հետ նախնական խորհրդակցությունների: Նախարարի կարծիքով այդպիսի խորհրդակցությունները «տեղին կլինեին», հաշվի առնելով Անկարայի եւ Բաքվի միջեւ հարաբերությունների ոգին:

Ինչպես հաղորդեց Հայաստանի էներգետիկայի եւ վառելիքի նախարարի խորհրդական Արեգ Գալստյանը, Թուրքիան կմատակարարի օրական 40 մՎտ էլեկտրաէներգիա: Նրա խոսքերով, մատակարարումները կսկսվեն ամենամոտ ժամանակներս, սակայն դրանց չափերը դեռ ճշտված չեն:

Թուրքիան համաձայնվել է նաեւ տրամադրել իր տարածքը Բուլղարիայից Հայաստան էլեկտրաէներգիա տեղափոխելու համար: Հայաստանը կստանա այդ էլեկտրականությունը (մոտ 50 մեգավատ) որպես մարդասիրական օգնություն: Մատակարարումները կսկսվեն դեկտեմբերի 1-ից: Այժմ հանրապետությունն օրական ստանում է 20-21 մլն կՎտ ժամ էլեկտրաէներգիա, այն դեպքում, երբ անհրաժեշտ է մոտ 30-32 մլն: ■

Թեմ կետ

Վրաստանը խախտում է զինադադարը

Ինչպես «ԻՏԱ»-ին հաղորդեցին Աբխազիայի եւ Վրաստանի պաշտպանության նախարարություններից, նոյեմբերի 25-ին եւ լույս 26-ի գիշերը համեմատաբար հանգիստ էր հակամարտության գոտում: Կողմերը պահպանում էին ժամանակավոր զինադադարի մասին պայմանավորվածությունը, որը ձեռք էր բերվել անցյալ հինգշաբթի ռուսաստանցի զինծառայողներին Սուխումից էվակուացնելու անհրաժեշտությամբ:

Աբխազական կողմի տվյալներով, վրացիները ստորաբաժանումների եւ մարտական տեխնիկայի մի մասը Սուխումից վերաբաշխել են Օչամչիրայի շրջան՝ Տղվարչելի քաղաքի վրա հարձակվելու եւ պարտիզաններին դեմ պայքարելու նպատակով:

Թբիլիսիից եւ Գուդաուտայից հաղորդեցին, որ նոյեմբերի 25-ին մարտեր են տեղի ունեցել Գվադա, Կոչարա գյուղերի մոտ, ինչպես նաեւ Տղվարչելիի մատույցներում: Երկու կողմերն էլ կորուստներ են կրել:

Աբխազիայի պաշտպանության նախարարության կարծիքով, *«Վրաստանի հրամանատարության գործողությունները վկայում են այն մասին, թե վրացիները ձգտում են զինադադարն օգտագործել Օչամչիրայի շրջանում գերակշռություն ստեղծելու նպատակով եւ ոչ մի բանով չեն նպաստում կոնֆլիկտի քաղաքական կարգավորման հնարավոր անհրաժեշտ պայմանների ստեղծմանը»:* ■

Միջազգային

Չինաստանը զգուշացնում է Ֆրանսիային

Պեկինում Ֆրանսիայի դեսպանին իր մոտ հրավիրելով Չինաստանի վարչապետը երեկ նոտա հանձնեց նրան, որով Փարիզի կառավարությանը զգուշացնում է Թայվանին ռազմական օդանավեր վաճառելու որոշման առթիվ: «Ֆրանսիան պատասխանատու է լինելու այդ օդանավերի հանձնման բոլոր հետեւանքների համար», նախազգուշացնում է նոտան: 3800 միլիոն դոլլար ընդհանուր արժողությամբ այդ օդանավերը, չինական կողմի համաձայն, կտրուկ ավելացնում են Թայվանի ռազմական կարողությունները: Այս վերջինը մի ամիս առաջ Ս. Նահանգներից գնել էր 150 F-15 մարտական ինքնաթիռ, որի առթիվ Պեկինը դարձյալ բողոք էր հայտնել Վաշինգտոնին, սակայն ոչ նույն ուժգնությամբ, նկատի ունենալով իր խիստ ձեռնտու առեւտրական հարաբերությունները այդ երկրի հետ:

Օգնությունը հասավ պատերազմած Գորաժդե

Սոչիից ի վեր պատերազմած բոսնիական Գորաժդե քաղաքը երեկ առաջին անգամ օգնություն ստացավ ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերի կողմից, որոնք մի քանի ամիս արդեն աշխատում էին այդ ուղղությամբ: Հույս կա, որ շուտով ՄԱԿ-ի շարասյունը 80 տոննա սննդամթերք կհասցնի նաեւ սերբերի կողմից պաշարված մի այլ քաղաքի՝ Շերբենիցա: Սարաեւոյում սերբ եւ բոսնիացի մահմեդական հրամանատարների միջեւ երեկ կայացավ հանդիպում, որի ընթացքում որոշվեց ոչ մի արգելք չդնել ՄԱԿ-ի մարդասիրական օգնության առաջ:

ԱՄՆ-ը պատրաստվում է զորք ուղարկել Սոմալի

Միացյալ Նահանգների պետքարտուղարի պաշտոնակատար Լորենս Իգլբերգերը երեկ մամուլի ասուլիսում հայտարարեց, թե իր երկիրը պատրաստվում է մեծաթիվ զորք ուղարկել Սոմալի, կազմակերպելու եւ վերահսկելու համար ՄԱԿ-ի մարդասիրական օգնությունն այդ տոմահար եւ քաղաքացիական պատերազմից տառապող երկրում: Նախորդ օրը ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը Մ. Նահանգների առաջարկով որոշել էր բազմապատկել միջազգային օգնության բաշխման ջանքերը Սոմալիում, որտեղ վերջին օրերին, ինչպես գրել էինք նախորդ համարում, բազմապատկվել են նպաստամատույց աշխատանքների խափանման դեպքերը: Միջազգային մի շարք կազմակերպություններ վերջին օրերին արդեն մտածում էին իրենց ծառայողներին դուրս հանել Սոմալիից, բախտի քմահաճույքին թողնելով միլիոնավոր սովահարներին, որոնց օրական մահացության տոկոսը վերջին շրջանում 200-ից իջել էր 30-ի:

Ավստրալիան հատուցում է պահանջում Բրիտանիայից

Ավստրալական կառավարության ներկայացուցիչը երեկ Լոնդոնում բրիտանական իշխանություններից հատուցում պահանջեց 30 տարի առաջ ավստրալիական բնիկների (աբորիգեն) տարածքներում ատոմային կերպով միջուկային բախումներ թաղելու համար: Ներկայացուցիչը հայտարարեց, թե Մեծ Բրիտանիան «նյութական եւ բարոյական պարտավորություններ ունի» Ավստրալիայի նկատմամբ, որը նրա գաղութն էր շուրջ 4 դար շարունակ եւ որը դեռեւս անդամ է բրիտանական հասարակաղեռության: ■

digitised by A.R.A.R.@

Բացառիկ

ՎԻԿՏՈՐ ՊՈԼՅԱՆԻՉԿՈ. «ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՍԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ ԴԵՌ ՉԻ ԵԿԵԼ»

Նոյեմբերի 18-ին լրանում է երեք տարին այն օրից, երբ նախկին ԽՍՀՄ ԳԽ հայտնի որոշմամբ Լեռնային Ղարաբաղի իշխանության լծակները բոլորի համար անաղասելի տվեցին այսպես կոչված հանրաքվեական կազմկոմիտեին, այսինքն Ադրբեջանին, դրանով իսկ մեծ տառաղանքների մատնելով ինքնավար մարզի հայ բնակչությանը: Այս տխուր տարելիցի առիթով «Սնարք»-ի Ստեփանակերտի թղթակիցը հեռախոսով կապվեց Մոսկվայում աղրող նախկին կազմկոմիտեի նախագահ **Վիկտոր Պոլյանիչկոյի** հետ, եւ նրա հետ հարցազրույց ունեցավ, որն էլ առանց զգալի խմբագրումների ու փոփոխությունների ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը:

– Վիկտոր Պետրովիչ, նախկին Միության ԳԽ ԼՂԻՄ-ի մասին որոշման ընդունումից երեք տարի անց ինչպե՞ս եք դուք վերաբերվում դրան:

– Դա մի որոշում էր, որը հավասարաչափ բացասաբար ընդունվեց Բաքվում, Ստեփանակերտում եւ Երեւանում: Ահա այսպիսի հազվագյուտ դեպք պատմության մեջ, երբ այդքան հեղինակավոր մարմնի ընդունած փաստաթուղթը չհամապատասխանեց ժողովուրդների սպասելիքներին:

Ես գիտեմ, որ այդ որոշումը տղան բերբերն այրել են եւ Ստեփանակերտում, եւ Երեւանում, եւ Բաքվում: Եւ դա առաջինն էր, որ չաջակցեց գլխավոր խնդրի կատարմանը՝ ազգերի հաշտեցմանը: Ինչ վերաբերում է կազմկոմիտեին, ապա որոշման համաձայն երկու խմբերի՝ ադրբեջանական եւ հայկական, կազմավորման փորձերը հաջողություն չունեցան, որովհետեւ հայկական կողմն այդպես էլ ներկայացուցիչներ չտվեց: Ես գտնում եմ, որ կազմկոմիտեի այդպիսի հավասարակշիռ կազմը սահմանադրական չէր, օրինազուրկ էր եւ հիմից սխալ, քանի որ Ադրբեջանի Հանրապետությունը նույն մակարդակի վրա էր դրվում իր կազմի մեջ մտնող մարզի հետ: Դա խոսում է այդ փաստաթուղթը նախապատրաստող մարդկանց «ձեռնհասության» մասին, սակայն բանականությունն այնուամենայնիվ երկու համայնքներին էլ պետք է հուշեր իրենց ներկայացուցիչներին առաջադրել իրավիճակի կարգավորման համար:

– ԱՊՀ պայմաններում ձեր կարծիքով, որո՞նք են դարաբաղյան հիմնախնդրի կարգավորման ուղիները:

– Ես գիտեմ, ինչպես դուրս գալ դարաբաղյան հակամարտությունից: Պատրաստ եմ այդ հարցը քննարկել պրոֆեսիոնալների հետ: Ես բազմիցս հանդես եմ եկել առաջարկություններով: Եթե գտնվեն խելացի մարդիկ, որոնք կլսեն իմ առաջարկությունները, իմ ձայնը, ապա մոտ ժամանակներս կդադարեն արյունն ու այն տառապանքները, որոնք անհեռատես քաղաքական գործիչների եւ այն մարդկանց հորինածն են, որոնց համար անձնականը միշտ էլ բարձր է եղել սեփական ժողովրդի շահերից:

– Դուք գիտեք ինչպե՞ս դուրս գալ ստեղծված իրավիճակից: Ես չսխալվեցի՞:

– Հարցի լուծումը պետք է փնտրել ոչ թե ԵԱՀԽ-ում, ոչ թե Եվրոպայում կամ Ամերիկայում, այլ Ղարաբաղում: Կրկնում եմ, եթե պրոֆեսիոնալները լսեն իմ ձայնն ու խորհուրդները, իսկ ես ամեն ինչ անում եմ արյունահեղությունը դադարեցնելու համար, ղարաբաղյան հիմնահարցի օրերը կարող են հաշված լինել:

– Եւ վերջինը: Ինչպե՞ս ձեզ ներկայացնենք ընթերցողներին: Որպես Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի նախկին երկրորդ քարտուղա՞ր, թե կազմկոմիտեի նախագահ: Մի խոսքով, ո՞վ եք դուք հիմա:

– Ինչ վերաբերում է կազմկոմիտեի նախագահին, այդ պաշտոնը երբեք չի եղել: Պետք է լինեին երկու համանախագահներ, որոնք կներկայացնեին հայկական եւ ադրբեջանական կողմերը: Նախագահի կարգավիճակ ինձ վերագրեցին լրագրողները, մամուլը, դուք գիտեք փաստաթղթերից, որ մենք միշտ ձգտել ենք երկու համայնքների շահերը պաշտպանելով նշանակել կամ տեսնել համանախագահ մյուս կողմում: Դա ձեր համար երեւի հայտնագործություն է:

– Չեմ բացցնում: Եւ այնուամենայնիվ, ինչո՞վ եք դուք հիմա զբաղվում:

– Հայտնի դեմքերի, սեւ արտերով եւ սեւ ձեռքերով մարդկանց ջանքերի շնորհիվ ես այսօր քաղաքականության մեջ չեմ: Այդպես էլ կարող եք ասել:

– Կարելի՞ է էլի մի քանի հարց տալ:

– Խնդրեմ:

– Շնորհակալություն: Մոսկվայում Այազ Մութալիբովի հետ հանդիպո՞ւմ եք:

– Ես հանդիպում եմ իմ բոլոր ընկերների հետ: Իմ ներկա դրությունն ինձ չի զրկել ընկերներից: Նրանք իմ հենարանն են:

– Իսկ դուք հայ ընկերներ ունե՞ք: Հանդիպո՞ւմ եք նրանց հետ:

– Ես ընկերներիս ազգային հատկանիշներով չեմ տարբերակում: Ինքներդ էլ գիտեք այդ հարցի դաժանությունը: Ընդհանրապես ես կարծում եմ, դուք հանդիպել եք շատ մարդկանց, որոնք օբյեկտիվ որեւէ բան կասեին այն ժամանակվա եւ ընդհանրապես այն ամենի մասին, արել ինչ եմ ես: Ինչ վերաբերում է իմ դիրքորոշմանը, ես այն պաշտպանել եմ, ինչպես կարողացել եմ. ադրբեջանական ժողովրդի շահերը, ադրբեջանական բանվորության, գյուղացիների, մտավորականների շահերը, որովհետեւ այդ ժողովուրդն ինձ իր մոտ կանչեց, վստահեց ինձ իր շահերը, իրձերն ու հույսերը:

– Չէի՞ք ցանկանա նորից վերադառնալ Ղարաբաղ:

– Ես Ղարաբաղում եմ ամեն օր, ամեն րոպե: Ինձ համար Ղարաբաղը հավերժահիշատակ է: Եւ էլի: Ուզում եմ հավատալ ձեր պրոֆեսիոնալիզմին: Պրոֆեսիոնալները երբեք չեն ստում: Պրոֆեսիոնալները միշտ ճշմարտությունն են ասում, որովհետեւ նրանք գիտեն դեղերի ողջ խորությունը, հանգամանքների ողջ բարդությունը: Դա առաջին հերթին: Եւ երկրորդ, ես գիտեմ, որ Կովկասում (ես ծնվել եմ Կովկասում), ինչպես այլ տարածքներում, դեռ չի եկել ճշմարտությունն ասելու ժամանակը: Դեռ չի եկել: Այսօր դեռ ճախրում են խոսակցություններ, սուտը, պախարակումները, կեղծավորությունը, պիտակները: Կուզեի, որ դուք չքաշեիք այն ամենը, ինչ ես ասացի:

– Մի անհանգստացեք:

– Համեմատենք թեկուզ Հայաստանի եւ Վրաստանի նախկին կենտկոմի երկրորդ քարտուղարների ճակատագրերը... իմ ճակատագրի հետ, մի մարդու, որն ուզեց հաշտեցնել երկու ժողովուրդներին: Ահա այստեղ է ողջ ճշմարտությունը, ողջ տրամաբանությունը, ողջ բանականությունը: Եթե սա տրեք, դա ձեր կողմից մարդկային կլինի:

Նոյեմբերի 26

Զրույցը վարեց ԼՂՀ-ում «Սնարք»-ի սեփ. թղթակից ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

Թուրքիա

«Հայերին կբացրինք, հիմա էլ լուսավորում ենք»

Այս վերնագիրն է օգտագործել թուրքական «Թյուրքիյե» թերթը, արձագանքելով Թուրքիայի եւ Հայաստանի Հանրապետության միջեւ էլեկտրաէներգիա մատակարարելու գծով կնքված պայմանագրին: Ըստ թերթի, Թուրքիան Հայաստանին կտա 300 միլիոն կիլովատ էլեկտրաէներգիա, որը կաղահովի տարեկան 20 միլիոն դոլլարի եկամուտ: Հայաստանի էներգետիկայի նախարարն էլ ասել է. «Մենք մուրացկանություն անելու չենք եկել Թուրքիա: Ստանալիք էլեկտրաէներգիայի դիմաց վճարելու ենք»: Իսկ Թուրքիայի էներգետիկայի նախարարն ավելացրել է. «Այս համաձայնությունն առնտրական գործարք է, որը մեր երջանում անդորրություն, անվտանգություն եւ հաշտություն է աղահովում»: ■

Ադրբեջան

Անհատույց վարկ ջրատարի կառուցման համար

Զարգացման իսլամական բանկը 280 հազար դոլլար է տրամադրել Ադրբեջանին որոշես անհատույց օգնություն: Այդ գումարը կօգտագործվի 176 կիլոմետրանոց նոր ջրատարի շինարարության նախագծային աշխատանքների համար, որի միջոցով Սամուր-Գուսար գետամեջի ստորգետնյա աղբյուրների ջրերը կհասցվեն Բաքու: Դա կնպաստի քաղաքում խմելու ջրի պահանջի բավարարմանը եւ կկազմի օրական ավելի քան 1 միլիոն խորանարդ մետր: 500 միլիոն դոլլար արժողությամբ ջրատարի շինարարությունն իր վրա է վերցրել թուրքական «Զաքարյա Չելյաբի» ֆիրման: Ջրատարը նախատեսվում է շահագործման հանձնել մինչեւ 1995 թ.: Թուրքական ֆիրման երաշխավորում է ջրի անքերի մատակարարումը 60 տարվա ընթացքում:

Տարբեր

Նոր կոմունիստների «նոր» խոսքը

Երեկ լույս տեսավ «Նոր խոսք» շաբաթաթերթի առաջին համարը: Այն Հայաստանի կոմկուսի կենտկոմի պատասխանատուներն է եւ հրատարակվելու է 3 հազար տպաքանակով: Առաջին համարում ընթերցողը կծանոթանա կենտկոմի հայտարարությանը, որտեղ կոմունիստների հիմնական քաղաքական նպատակ է հայտարարվում սոցիալական արդարության պաշտպանությունն ու Հայաստանի անկախ պետականության ամրացմանը սատարումը: Թերթում տպագրված է նաեւ կոմկուսի քարտուղար Սերգեյ Բաղալյանի մեծածավալ հարցազրույցը: Ինչպես «Սնարք»-ի թղթակցին հաղորդեց խմբագրական խորհրդի անդամ Խաչիկ Հովակիմյանը, թերթը չի գտնվի ընդդիմության շարքերում եւ սկզբնական շրջանում ավելի շատ ուշադրություն կդարձնի կուսակցական ներին կյանքին:

Նոր թերթը դառնում է կոմկուսի լուրջ քաղաքական լծակը, որի սկզբնական կազմակերպությունները, Հովակիմյանի խոսքերով, թերթին աջակցություն են խոստանում:

Օձերին հատուկ ուշադրություն

Հայաստանի բնության պահպանության նախարարությունը լրջորեն մտահոգված է, որ օձի թանկարժեք բույն սանալու նպատակով հանրապետությունում աճում է թունավոր օձերի աղօրինի որսը:

Արդեն ամենամոտ ժամանակներս հանրապետությունում կարող է վերանալ կովկասյան գյուրզան: Դա կանխարգելելու համար պետական հսկողություն է սահմանվել հանրապետություն ներմուծվող եւ արտահանվող օձերի եւ օձի բույնի վրա: Այդ մասին նախազգուշացվել են մաքսային վարչությունը եւ ադրանքահումային բորսաները:

Նախարարությունը փորձում է խնդիրը լուծել գիտական հիմունքներով օձերի պահպանության եւ օձի բույնի արդյունահանման մասին համաձայնագիր կնքելով Հայաստանի Գիտությունների ակադեմիայի կենդանաբանության ինստիտուտի հետ:

Ակամա՞, թե կանխամտաեվաե

Ինչպես հայտնի է, նոյեմբերի 22-ին Կոտայքի շրջանի Արամուս գյուղում հրազենից սպանվել է ՀՀ դատախազության ընդհանուր հսկողության վարչության դատախազ Լեւոն Գաբոյանը: Մեղմությամբ դատարան է ներկայացել Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր Սամվել Թեւոսյանը: Մեզ հաջողվեց պարզել, որ մեղայականի վարկածը անփոփոխությունն է՝ պատգամավորի կողմից փորձ է արվել հրազենը վերցնել, որն էլ պատահմամբ կրակել է: Սակայն վարկածը խիստ կասկածելի է, քանի որ, ինչպես տեղեկացանք աստյգ աղբյուրներից, տուժողն ինչ-որ խմբի կողմից հետապնդվել է, ապա դաժանաբար ծեծի ենթարկվել: Զոհվածի մոտ անգամ գանգուկրի կոտրվածք է հայտնաբերվել: Ի վերջո, չբավարարվելով ֆիզիկական հաշվեհարդարով, հանցագործները հրազենի կրակոցով սպանել են դատախազին:

Գործի առնչությամբ հետաքննություն է տարվում: ■

Սոցիալական

Բնակչության արտահոսքը նվազե՞լ է

Հայաստանից բնակչության զանգվածային արտահոսքի մասին այսօր բավականին հաճախ է խոսվում: Բերվում են ամենահակասական թվեր ինչպես արտասահման մեկնել ցանկացողների, այնպես էլ արդեն մեկնածների մասին (խոսքը մշտական բնակության մեկնողների մասին է): Իհարկե, զանգվածային արտահոսքն ավելի հաճախ կապում են սոցիալ-տնտեսական դժվարությունների, անիշխանության եւ աղագայի նկատմամբ անորոշության հետ՝ ներկայացնելով դա որպես իշխանությունների վարած աղաշնորհ քաղաքականության ամենանցանկալի հետեւանքներից մեկը: Իսկ վերջերս նույնիսկ ֆրանսիական «Մոնդ» թերթը հարցումներ էր անցկացրել, համաձայն որի մոտ 500 հազար հայաստանցիներ ցանկանում են մեկնել արտասահման՝ մշտական բնակության:

Հայաստանում ամենատարբեր մակարդակներով խոսակցություններ են շրջում, թե իշխանություններն ամեն կերպ ջանում են թաքցնել բնակչության արտագաղթի իսկական չափերը: Ամենեւին հավակնություն չունենալով հաստատել կամ հերքել այդ խոսակցությունները, այնուամենայնիվ որոշեցինք դիմել Հայաստանի վիճակագրության բնակչության բաժնի գլխավոր մասնագետ Սուսաննա Ղարիբյանին, որն էլ տեղեկացրեց, թե 1991 թվականին Հայաստանից արտասահման մշտական բնակության է մեկնել ընդամենը 7555 մարդ, որից 151-ը գյուղական բնակավայրերից: Ինչ վերաբերում է այս տարվան, ապա ըստ նրա, առայժմ տեմպերն այնպիսին են, որ վերջնական թվերն ամենայն հավանականությամբ ավելի փոքր կլինեն: Նա տեղեկացրեց նաեւ, որ հանրապետությունում նկատվում է բնակչության արտահոսքի նվազման միտում (ամենամեծ արտահոսքը գրանցվել է 1988 թվականին՝ մոտ 12 հազար):

Ճիշտ է, հազիվ թե գտնվի որեւէ մեկը, որին պատասխանական տվյալներն անվերապահ վստահություն ներշնչեն, մանավանդ, որ գոյություն ունեն վիճակագրության բնակչության բաժինը շրջանցելու բազմաթիվ միջոցներ: Վիճակագրությունն այդ տվյալներն ստանում է շրջանների ներքգործբաժիններից, այլ կերպ ասած՝ գրանցում է միայն այն անձանց, որոնք արտասահման մշտական բնակության մեկնելուց առաջ դուրս են գալիս գրանցումից: Մինչդեռ կարելի է արտասահման մեկնել «ժամանակավորապես» եւ այլեւս չվերադառնալ կամ մեկնելուց առաջ «նեղություն չքաշել» դուրս գալ գրանցումից եւ այլն: Եւ այնուամենայնիվ, ըստ տիկին Ղարիբյանի, վիճակագրության տվյալները բավականին մոտ են իսկությանը, որովհետեւ ի հակակշիռ վարչությունը շրջանցելով արտասահման մեկնողների, կան նաեւ այնպիսիք, որոնք արդեն դուրս են եկել գրանցումից, բայց դեռ մեկնել չեն կարող: Ըստ նրա, վարչության տվյալներն ավելի մոտ են իսկությանը նաեւ այն պատճառով, որ ՕՎԻՐ-ում արձանագրվում են միայն 16 տարեկանից-մեծ անձինք:

Ի դեպ, հետաքրքիր է նաեւ այն փաստը, որ արտասահման մեկնողների մոտ 98 տոկոսը քաղաքաբնակներ են, բայց սա արդեն այլ թեմա է՝ արժանի լուրջ վերլուծության:

ԱՐԱՍ ԱՐՂՈՒԹՅԱՆ

Բաքուն հերքում է Մոսկվայի մեղադրանքները

Ադրբեջանի գյուղատնտեսության եւ սննդամթերքի նախարարությունը հերքել է Մոսկվայի իշխանությունների մեղադրանքները Դաշնակցային Ռուսաստանի մայրաքաղաք կեղծ եւ խմելու համար ոչ պիտանի կոնյակներ մատակարարելու վերաբերյալ: Նախարարի տեղակալ Յուսիֆ Ջումշուդովը հայտարարել է, թե Ադրբեջանը Մոսկվայում ոգելից խմիչքների գործարան ունի, եւ ուստի հանրապետությունից այնտեղ կեղծ արտադրանք առաքելու կարիք չկա: Փոխնախարարի կարծիքով, կոնյակի ընդհատակյա արտադրությունը կազմակերպվել է հենց Մոսկվայում: «Մենք առաջարկել ենք Մոսկվայի իշխանություններին ստեղծել հանձնաժողով եւ հետաքննություն անցկացնել, սակայն պատասխան չենք ստացել», ասել է Յու. Ջումշուդովը:

Դիզելային վառելանյութ սննդամթերքի փոխարեն

Ադրբեջանի վարչապետ Ռահիմ Հուսեյնովի կարգադրությամբ մինչեւ տարվա վերջ Մոլդովա կուղարկվի 30 հազար տոննա դիզելային վառելանյութ՝ այնտեղից առաքվելիք սննդամթերքի դիմաց: Երկու հանրապետությունների միջեւ քիմիական հիմունքներով աղրանքափոխանակության մասին պայմանավորվածությունը ձեռք է բերվել անցյալ ամիս Բաքվում, երբ Ադրբեջանի եւ Մոլդովայի միջեւ ստորագրվել է 1993 թվականի առեւտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագիրը: ■

digitised by A.R.A.R.@

Դասիարակություն

Ո՞Վ ՊԵՏՔ Է ՁԲԱՂՎԻ ՀԱՆՑԱԳՈՐԾ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐՈՎ

Անչափահասների հանցագործություններն աճում են, նրանցով զբաղվող մարմինները լուծարվում

Հանցագործությունների այսպիսի աննախընթաց աճ Հայաստանում երբեմն չի նկատվել: Դրա պատճառները խորն են, արմատները պետք է փնտրել տնտեսության ճգնաժամային վիճակի մեջ: Սակայն եթե ադեկատությունը հանցագործության մայրն է, ապա չպետք է մոռանալ, որ անխոհեմությունն էլ հայրն է: Ուրեմն միայն պատճառները նշելով ու մեր դրանք վերացնելու հարցում անգործությունը գրանցելով հանրապետության բնական մթնոլորտը չի բարելավվի: Իսկ հանցագործությունների աճը կասեցնելու եւ թիվը նվազեցնելու միջոցառումները պետք է սկսվեն մանուկների եւ պատանիների ճիշտ դաստիարակությունից, նրանց հանցագործ «անխոհեմությունը» կանխելուց: Անչափահասների հետ տարվող աշխատանքների մասին տեղեկանալու նպատակով դիմեցինք ՀՀ դատախազության անչափահասների վերաբերյալ օրենքների կատարումը վրա հսկող բաժնի պետ, արդարադատության ավագ խորհրդական Ռոբերտ Փափազյանին:

– Պարոն Փափազյան, սկսենք վերջին շրջանում անչափահասների հանցագործությունների վիճակի ուսումնասիրումից. մի փոքր վիճակագրությունն ընթերցողին պատկերացում կտա ինչպիսին է վիճակն այդ ոլորտում:

– Անչափահասների հանցագործության մակարդակով մենք երբեմն չենք «փայլել», նախկին ԽՍՀՄ տարածքում այդ առումով մենք ամենաբարվոք վիճակում էինք: Հանցագործությունների քանակն այնքան փոքր էր, որ միութենական հանրապետությունների գործընկերները կատակում էին, թե աշխատանքների բացակայության պատճառով կարելի է մեր բաժինը լուծարել: Սակայն պատկերն այլ է այսօր: Ընդհանուր հանցագործությունների աճի ֆոնի վրա խիստ աճել են նաեւ անչափահասների հանցագործությունները: Համեմատության համար բերեմ մի քանի թվեր. եթե 1991 թ. ինն ամիսների ընթացքում գրանցվել է անչափահասների հանցագործության 211 դեպք, ապա 1992 թ. նույն ժամանակի համար՝ 276 դեպք (91 թվականին իր հերթին զգալի աճ է նկատվել նախորդ տարիների համեմատ): Այսինքն հանցագործությունների քանակն աճել է 65-ով կամ 30,8 տոկոսով: Առանձին հանցագործությունների գծով նույնպես աճ կա, օրինակ՝ 1991 թ. ինն ամսում կատարվել է գույքի գողության 44 դեպք, 1992 թ. 115, այսինքն 161,3 տոկոսով ավելի: Գրանցվել է խուլիգանության դեպքերի աճ՝ 33,3 տոկոս: Մեծացել են խմբակային հանցագործություններում անչափահասների մասնակցության փաստերը, 1991 թ. 52 դեպք, 1992՝ 93, աճը կազմում է 78,8 տոկոս: Ընդհանուր թվով եթե 1991 թ. 9 ամսում հանցագործություն է կատարել 275 անչափահաս, ապա 1992 թ. 9 ամսում՝ 347, աճը 24,7 տոկոս է: Առաջներում գրեթե չէինք ունենում անչափահասների կողմից սպանությունների ու բռնաբարությունների դեպքեր: Այժմ պատահում են:

– Ձեր կարծիքով որո՞նք են անչափահասների հանցագործությունների աճի պատճառները:

– Եթե հասարակության ճգնաժամը եւ այլ խոշոր խնդիրներ բողնենք մի կողմ ու անդրադառնանք այն հարցերին, որոնք կառավարելի են եւ անմիջականորեն կապված պատանիների ու նրանց հետ տարվող աշխատանքների հետ, պետք է նշեմ հետեւյալը. երեխայի դաստիարակությունն սկսվում է ընտանիքում, շարունակվում դպրոցում: Հենց ընտանեկան ամուր կապերի, ավանդույթների գոյությունն էլ մինչեւ այժմ հետ է պահել պատանիներին հանցավոր արարքներից: Այսօր եթե ընտանիքի մասին չխոսենք, դպրոցում երեխայի դաստիարակության ուղղությամբ ոչինչ չի արվում: Նրանց մատուցվում են միայն ինչ-որ կիսաս-պրաս գիտելիքներ եւ վերջ: Նախկինում գործող պիոներական, կոմերիատական կազմակերպությունները, զանազան ջոկատները, հավաքույթները, առաջադրանքները, տեքությունը եւ այլն վերացել են: Ճիշտ է, դրանք մեծ մասամբ կեղծ էին, բայց ինչ-որ աշխատանք, ինչ-որ ազդեցություն էին բողնում: Չեն գործում երկարօրյա խմբերը: Արտադասարանական ուսուցմանը, աշխատանքային դասերին այսօր փոխարինել են 45 ռուբլանոց դասամիջոցները: Երեխաները բառացիորեն հայտնվել են փողոցներում: Այս բոլորին եթե ավելացնենք, որ գործազրկության աճի հետ ծառանում է անչափահասներին աշխատանքի տեղավորելու խնդիրը, ամեն ինչ պարզ կդառնա: Թեեւ աշխատանքային օրենսդրության 206 հոդվածում նախատեսվում է գործատների կողմից անչափահասներին 0,5-10 տոկոսի չափով աշխատանքային տեղերի տրամադրում, դա չի կատարվում: Այստեղից էլ չսովորող եւ չաշխատող երիտասարդների հանցագործությունների աճը՝ 1991 թ. 9 ամսում՝ 58, 1992 թ.՝ 106 դեպք, աճը 82,7 տոկոս է:

– Իսկ իրավապահ մարմինները զբաղվո՞ւմ են դեռահասների հարցերով, ի՞նչ աշխատանքներ են կատարվում նրանց կողմից:

– Սա ամենացավոտ հարցն է: Նախարարների խորհրդին առընթեր անչափահասների գործերի հանձնաժողովը, որ համակարգում եւ մեթոդական օգնություն էր ցույց տալիս տեղերում անչափահասների գործերով հանձնաժողովներին, երեք տարի առաջ վերացվեց: Շատ ենք դիմել դրա վերականգնման խնդրով: Վերջերս այդ հարցով դեպնախարար Գրիգոր Արեւշյանի մոտ խորհրդակցություն հրավիրվեց, սակայն անարդյունք: Տեղերում գործկոմներին առընթեր անչափահասների հանձնաժողովներն առայժմ պահում են: Չէ՞ որ միայն պատժամիջոցներով չի կարելի պայքարել անչափահասների հանցագործությունների դեմ: Անհրաժեշտ է, որ անչափահասն իր նկատմամբ ուշադրություն զգա, հասկանա, որ պատկառելի մարդիկ հետեւում են իրեն, անհրաժեշտության դեպքում նկանչեն, կոչտժեն, ծնողներին կիրավիրեն, կսխիստեն հասարակությանը պատճառած վնասը փոխհատուցել: Բացի այդ, ԲՀՏ-ներում կային մանկական սենյակներ, մանկավարժներ: ԲՀՏ-ների վերակազմավորման հետ դրանք էլ վերացան: Մյուս օղակը ներքին գործերի մարմիններում գործող անչափահասների գործերի տեսչություններն են, ավելի ճիշտ՝ էին:

– Դրանք է՞լ են վերացել:

– Այո, ներքգործնախարար Վանո Սիրադեղյանի հրամանով 1992 թ. սեպտեմբերի 1-ից վերացվեցին անչափահասների գործերով տեսչությունները: Հրամանում ձեւակերպված է, որ դրանք «չեն համապատասխանում հանցագործությունների դեմ արդյունավետ պայքար մղելու սկզբունքներին»: Ճիշտ է, մենք էլ ժամանակին նշել ենք դրանց անգործության մասին, սակայն վերացնելուն կտրականապես դեմ էինք: Պետք էր պարզել անգործության պատճառները եւ դրանք վերացնել: Իսկ պատճառներից էին՝ տեսչությունները իրավաբանական կրթությամբ անձանց համար բոլորովին բարդ էին ծառայում: Դրա երբ ըստ իս այս օղակում մանկավարժական կրթությամբ երիտասարդ կանանց ներգրավելն էր, մանավանդ որ կանայք ավելի հաճույքով եւ արդյունավետությամբ կաշխատեին: Սակայն տեսչությունների աշխատանքի շնորհիվ մեկ տարում օրինազանցների 37,8 տոկոսը հանվել է հաշվառումից: Իսկ այս բոլոր մարմինները վերացնելով, նրա փոխարեն ոչինչ չստեղծելով նույնպես է, որ վերացնենք առողջարաններն ու հիվանդանոցները եւ ստեղծենք մի հզոր բաղնան բյուրո: Այժմ անչափահասների հարցերով զբաղվում են ընդհանուր հիմունքներով, առանց տարիքային տարբերակման: Մինչդեռ բոլոր քաղաքակիրթ երկրներում վիճակն այլ է:

– Իսկ որքա՞ն է այժմ դատապարտված անչափահասների թիվը:

– 1991 թ. դատապարտվել են 203 հոգի, որից 134-ը կալանքի հետ կապ չունեցող պատիժներ են կրում: Դրանք են՝ հարկադիր աշխատանքները, եւ պատժի կիրառման հետաձգումը: Սակայն ունենք նաեւ անչափահաս կրկնահանցագործներ, որոնց թիվն անցյալ տարվա համեմատ աճել է 23 տոկոսով: Սա շատ անհանգստացնող փաստ է:

– Ձեր կողմից իրականացվում է անչափահասների գործերի քննության հսկողությունը: Մենք ժամանակին գրել ենք Մերգելյանի փորձարարական գործարանից կատարված հափշտակումների, ապա ենթադրյալ հանցագործների հայտնաբերման մասին: Ձերբակալվածներից հինգը անչափահասներ էին, որոնց կաղակցությամբ ահազանգեր ստացանք, թե քննությանը խորթ մեթոդներ են կիրառվել եւ դատավարական նորմերի կոպիտ խախտումներ կատարվել: Մենք չկարողացանք պարզել դրանց իսկությունը: Այսօր անչափահասների նկատմամբ խափանման միջոցը փոխված է եւ զանգատները նոր թափ են ստացել: Հինգն էլ այժմ հրաժարվել են նախնական ցուցմունքներից եւ պահանջում են քննություն կատարել: Ի՞նչ կասեիք այս գործի կապակցությամբ:

– Գործի քննությունն ավարտված չէ, ուստի այդ կապակցությամբ մանրամասներ հաղորդել չեմ կարող: Քննությունն աղյուսների միջոցներով կատարելու վերաբերյալ մենք նույնպես բողոքներ ենք ստանում եւ այժմ այդ գործը դատախազության ուշադրության կենտրոնում է: ՀՀ գլխավոր դատախազի առաջին տեղակալ Միխայել Գրիգորյանի մոտ անցկացված խորհրդակցությունում կատարվեց վերը նշված գործի վերլուծությունը: Դատախազի առաջին տեղակալի կարգադրությամբ գործի քննությունը վերցվել է ներքին գործերի քաղաքաշրջանային բաժիններից եւ հանձնվել քաղաքային դատախազությանը: Հատուկ հրահանգված է քննությամբ պարզել խորթ մեթոդների կիրառման եւ դատավարական խախտումների կատարման փաստերը եւ տվյալ անձանց պատասխանատվության հրավիրել:

ԱՐՄԻՆԵ ՕՀԱՆՅԱՆ

Էկեղեցի

Հալեպում գումարվեց Կիլիկիո կաթողիկոսության ազգային ընդհանուր ժողովը

Իսը տարիների ընդմիջումից հետո, նոյեմբերի 16-20-ը Հալեպում գումարվեց Կիլիկիո կաթողիկոսության ազգային ընդհանուր ժողովը:

Նոյեմբերի 16-ին Հալեպի Ս. Աստվածածին եկեղեցում հավատաքանչ արարողությամբ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ կատարեց ընդհանուր ժողովի բացումը: Ապա Կիլիկիո կաթողիկոսության 10 թեմերը (Լիբանան, Բեյրութ (Սիրիա), Կիպրոս, Հունաստան, Հյուսիսային Ամերիկայի Արեւելյան եւ Արեւմտյան թեմեր, Թեհրանի, Իրանա-Հնդկաստանի, Աստրախանի եւ Քուվեյթի կաթողիկոսական փոխանորդություն) ներկայացնող թեմական առաջնորդներ; հոգեւորական ներկայացուցիչներ եւ աշխարհական պատգամավորներ «Կիլիկիա» երգի երգեցողությամբ ուղղվեցին եկեղեցու դահլիճը, որտեղ սկսվեցին ժողովի աշխատանքները:

Ազգային ընդհանուր ժողովի կողմից շնորհավորական հեռագիր հղվեց Սիրիայի նախագահ Հաֆեզ Ալ-Ասադին՝ շնորհակալություն հայտնելով պատմական այդ ժողովը Հալեպում գումարելու առիթն ընծայելու համար:

Ընտրվեց Կիլիկյան կաթողիկոսության Ազգային կենտրոնական նոր վարչություն, որի անդամների ջախջախիչ ճնշամասնությունը ՀՅԴ բյուրոյի այժմյան եւ նախկին, ինչպես նաեւ ՀՅԴ տարբեր երկրների կենտրոնական կոմիտեների անդամներ են: ■

Հայրենիք

Հիմա էլ եկեղեցու զանգը

Հոկտեմբերի վերջին Ախալքալաքի շրջանի Մաջաղիա գյուղի եկեղեցուց անհետացել է 38-40 կիլոգրամ կշիռ ունեցող զանգը: Մաջաղիացիների կարծիքով 124 տարվա վաղեմություն ունեցող զանգը գողացել են Թուրքիա արտահանելու նպատակով: Բանն այն է, որ վերջին ամիսներին հայտնաբերվել են դրանց անգործության մասին, սակայն վերացնելուն կտրականապես դեմ էինք: Պետք էր պարզել անգործության պատճառները եւ դրանք վերացնել: Իսկ պատճառներից էին՝ տեսչությունները իրավաբանական կրթությամբ անձանց համար բոլորովին բարդ էին ծառայում: Դրա երբ ըստ իս այս օղակում մանկավարժական կրթությամբ երիտասարդ կանանց ներգրավելն էր, մանավանդ որ կանայք ավելի հաճույքով եւ արդյունավետությամբ կաշխատեին: Սակայն տեսչությունների աշխատանքի շնորհիվ մեկ տարում օրինազանցների 37,8 տոկոսը հանվել է հաշվառումից: Իսկ այս բոլոր մարմինները վերացնելով, նրա փոխարեն ոչինչ չստեղծելով նույնպես է, որ վերացնենք առողջարաններն ու հիվանդանոցները եւ ստեղծենք մի հզոր բաղնան բյուրո: Այժմ անչափահասների հարցերով զբաղվում են ընդհանուր հիմունքներով, առանց տարիքային տարբերակման: Մինչդեռ բոլոր քաղաքակիրթ երկրներում վիճակն այլ է:

– Իսկ որքա՞ն է այժմ դատապարտված անչափահասների թիվը:

– 1991 թ. դատապարտվել են 203 հոգի, որից 134-ը կալանքի հետ կապ չունեցող պատիժներ են կրում: Դրանք են՝ հարկադիր աշխատանքները, եւ պատժի կիրառման հետաձգումը: Սակայն ունենք նաեւ անչափահաս կրկնահանցագործներ, որոնց թիվն անցյալ տարվա համեմատ աճել է 23 տոկոսով: Սա շատ անհանգստացնող փաստ է:

– Ձեր կողմից իրականացվում է անչափահասների գործերի քննության հսկողությունը: Մենք ժամանակին գրել ենք Մերգելյանի փորձարարական գործարանից կատարված հափշտակումների, ապա ենթադրյալ հանցագործների հայտնաբերման մասին: Ձերբակալվածներից հինգը անչափահասներ էին, որոնց կաղակցությամբ ահազանգեր ստացանք, թե քննությանը խորթ մեթոդներ են կիրառվել եւ դատավարական նորմերի կոպիտ խախտումներ կատարվել: Մենք չկարողացանք պարզել դրանց իսկությունը: Այսօր անչափահասների նկատմամբ խափանման միջոցը փոխված է եւ զանգատները նոր թափ են ստացել: Հինգն էլ այժմ հրաժարվել են նախնական ցուցմունքներից եւ պահանջում են քննություն կատարել: Ի՞նչ կասեիք այս գործի կապակցությամբ:

– Գործի քննությունն ավարտված չէ, ուստի այդ կապակցությամբ մանրամասներ հաղորդել չեմ կարող: Քննությունն աղյուսների միջոցներով կատարելու վերաբերյալ մենք նույնպես բողոքներ ենք ստանում եւ այժմ այդ գործը դատախազության ուշադրության կենտրոնում է: ՀՀ գլխավոր դատախազի առաջին տեղակալ Միխայել Գրիգորյանի մոտ անցկացված խորհրդակցությունում կատարվեց վերը նշված գործի վերլուծությունը: Դատախազի առաջին տեղակալի կարգադրությամբ գործի քննությունը վերցվել է ներքին գործերի քաղաքաշրջանային բաժիններից եւ հանձնվել քաղաքային դատախազությանը: Հատուկ հրահանգված է քննությամբ պարզել խորթ մեթոդների կիրառման եւ դատավարական խախտումների կատարման փաստերը եւ տվյալ անձանց պատասխանատվության հրավիրել:

ԱՐՄԻՆԵ ՕՀԱՆՅԱՆ

Վ. Ոսկանյանը Ռումինիայի խորհրդարանի անդամ

Ռումինիայի խորհրդարանական ընտրություններին պատգամավոր վերընտրվեց նաեւ հայազգի Վարուժան Ոսկանյանը: Նա ներկայացնում էր Ռումինիայի միակ հայկական կազմակերպությունը՝ Ռումինիայի Հայոց միությունը: Նա 34 տարեկան է, մասնագիտությամբ տնտեսագետ, միեւնույն ժամանակ գրող եւ լրագրող: ■

Հայրենիք

Արժանապատիվ տանենք մեր ցավը

Նոյեմբերի 23-ի երեկոյան Օստանկինոյի առաջին ծրագրով տրված Դարբասի ներկա կացությանը նվիրված հեռուստաֆիլմին կարելի էր արձագանքել անմիջապես, բայց ես փորձեցի իմանալ նաեւ ուրիշների կարծիքը: Եւ բնավ էլ զարմանալի չէր, որ շատերն էլ ինձ պես տարակուսում էին:

Հավատացնում եմ, որ այդ երեկո Հայաստանից դուրս հեռուստացույցի առջեւ նստած ամեն մի հեռուստադիտող՝ հայ թե այլազգի, ակնկալիք ուներ, հատկապես Լ. Հարությունյանի ներգծականից հետո, վերջապես ինչ որ չափով իրական տեղեկատվություն ստանալ Դարաբաղում տեղի ունեցող իրադարձությունների, հակամարտության կարգավորման որեւէ հեռանկարի մասին, առավել եւս նկատի ունենալով ժողովածուում արված այն ակնարկը, թե Արցախը դարձել է քաղաքական բարդ խաղերի ասպարեզ:

Բայց ավա՜ղ: Ըստ երեւույթին վերջին տարիներին Հայաստանից տրվող հեռուստատեսային ռեպորտաժների մեծ մասին բնորոշ լիրիկա-ողբերգական մոտիվները (թող ներեն ինձ ընթերցողները) որոշակի ավանդույթներ են ստեղծել այս բնագավառում, եւ այս վերջին ժողովածուն էլ դժբախտաբար կրում էր դրանց ազդեցությունը: Չես հասկանում, ինչպես կարելի է ֆիլմ նկարահանել արյունահամվող երկրի մասին եւ ներկայացնել հսկա հեռուստալսարանին, շեշտը դնելով... օդերեւութաբանական էֆեկտների վրա: Իրադրության քաղաքական ծանրակշիռ վերլուծության փոխարեն՝ ուրախությունի մեկնաբանություններ, դաժան իրողության պատկերման փոխարեն՝ ուրաձմվիկ տեսարաններ՝ արված գեղարվեստականորեն:

Ինչո՞ւ, ինչի՞ համար: Մի՞թե ժողովածուի հեղինակները կարծում են, թե էկրանին տեսնելով հեկեկացող հայ տղամարդուն, հեռուստադիտողները փղձկում են ցավից ու կարեկցանքից: Մի՞թե օրոք առաջացնելը հայերիս համար դարձել է պրոպագանդիստական պայքարի միջոց: Համոզված եղեք, որ այդ ծանր իրողություններից միայն հայի սիրտն է ճմլվում: Ուրիշների մոտ նկատվում է կամ անտարբերություն, կամ չարախնդություն, կամ էլ պարզապես արհամարհանք: Եւ բանը միայն այն չէ, որ ասենք Ռուսաստանն էլ ունի իր «դարաբաղները», տնտեսական ու քաղաքական խնդիրները: Այստեղ նաեւ չեն մոռացել, որ հայերն «առաջինն արհաբար» ոտի ելան հզոր կայսրության դեմ եւ բազում խնդիրներ ստեղծեցին իրենց ինքնիշխանության պայքարով: Իսկ հիմա նրանք ստանալով բաղձալի «անկախությունը» եւ ազատվելով ռուսների «սարկական լծից», բողոքում են փոխարենը պարգեւ ստացած ավերված տնտեսությունից եւ պատերազմից: Հետաքրքիր է, ի՞նչ արձագանք է տպասում «Նովոստի» ծրագրի թղթակից Վլադիմիր Նազարյանը՝ իր ռեպորտաժներից, որոնք նա հետեւողականորեն վարում է իր անուղղելի հուսահաս տոնով: Եւ հարց են տալիս՝ իսկ ո՞վ է մեղավոր, որ Հայաստանում բենզին չկա, լույս չկա, էլեկտրականություն չկա, հաց չկա եւ այլն, եւ այլն: Համենայն դեպս, այդ հարցին «Նեզավիսիմայա գազետա»-ն պատասխանում է ուրիշ հարցով՝ «Իսկ ո՞ւմ վրա էին հույս դրել հայերը»:

Պարզ է, տհաճ խոսակցություն է: Բայց եկեք մեր ցավն էլ տանենք արժանապատվությամբ եւ մեր անարգված ինքնասիրությունը չդարձնենք հեգնանքի առարկա:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մեր սեփ. թղթակից, Մոսկվա

Անահիտ Տեր-Մինասյանը թուրքերենի թարգմանված

Թրքական «Իլեսիշիմ» հրատարակչությունը «Գողանի համալսարան» շարքով լույս է ընծայել Անահիտ Տեր-Մինասյանի «Հայկական հեղափոխական շարժման մեջ ազգայնականությունն ու ընկերվարությունը 1887-1912» աշխատությունը: Այն 1980 թվականին ներկայացվել էր Վաշինգտոնում կազմակերպված «Անդրկովկասի մեջ ազգայնականության եւ հավասարակարգության հեղաշրջումը» խորագրով գիտաժողովում: ■

digitised by A.R.A.R.@

Բանավեճ

ԱԽՍՈՐՈՇԵԼ ՉԳԻՏԵՔ, ՈՂՋ ԵՔ ԲԺՇԿԵԼՈՒ

ԿՏՐԻՃ ՍԱՐԳԱՐՅԱՆ

Ստորև տպագրվող հոդվածը դասախոսն է անցյալ շաբաթ «Երկիր» օրաթերթում հրապարակված Սուրեն Զոլյանի հոդվածին: Պրն. Կտրիճ Սարգարյանի ասելով, իր դասախոսությունը «Երկիր»-ը մերժել էր տպագրել, ուստի եւ, քանի որ վեճը սկսվել է Ձեր թերթում, նախկին դեսանախարարի խնդրանքով այն ներկայացնում ենք ձեր ուշադրությանը:

Հարգարժան դարոն Զոլյան: Հարգարժան նախկին գործընկեր: Ես քո հանդեպ ատելություն չունեմ: Գիտես, որ վերջին մեկ տարում ինձ շատ են հայհոյում, բայց ես ոչ մեկին չեմ դատապարտել, որովհետեւ այդ մարդկանց կարծիքն ինձ համար նշանակություն չունի: Անկախ քո քաղաքական հայացքներից, ես քեզ դարկեցս մարդ եմ համարել: Պարզվում է, որ սխալվել եմ: Քեզ ուրախացնեմ: Իմ անուն ազգանունից ավելի զվարճալի բառակապակցություններ կարելի է ստեղծել: Արդեն արել են: Երեւի դա էլ հաճույք ստանալու մի նոր ձեւ է: Ավելի ճիշտ լուրջ հարցերը զավեշտի վերածելու մոլուցք: Ոչինչ չունեմ ասելու: Բավարարեք ձեր զգացմունքները ինչպես կարող եք, բայց ազատամտությունը մի վերածեք ազատանմտության: Չեզ չեմ խնայում, գոնե դահիճ լրջությունը հասկացեք:

Մտածո՞ւմ եք, որ գործ ունեք դատարկվող հողի ու կործանման եզրին հասած հայրենիքի հետ: Հասկացանք, դուք շատ եք սիրում հայրենիքը, բայց ի՞նչ գործնական օգուտ է ստացել հայրենիքը ձեր վառվռուն սիրուց: Ոչինչ: Ավելին ասեմ, այս ողբերգությունը նաեւ ձեր սիրո ու անսպրդելի հայրենասիրության հետեւանք է: Այո, մի զարմացիր, սիրելով էլ են կործանում: Քո սերը զգացմունքային է եւ ցավ չունի: Իմ սերը լեզվի ծայրին չէ, խորքում է: Դու չես տեսնում: Այդ սիրուց ծնված ցավն է ինձ տանջում: Պատասխանատվությունը հողի, հայրենիքի, իմ եւ քո երեխաների ճակատագրի համար: Բայց տեսակի տարբերությունն ինձ երբեք թույլ չի տա, որ քո անուն ազգանունից բառակապակցություն ստեղծեմ: Առավել եւս այդ բանը չեմ անի հրապարակով: Չեմ իջնի քո մակարդակին, որովհետեւ իմ հոդվածներում եւ ելույթներում ոչ ոքի չեմ վիրավորել: Իմը սկզբունքներիս փաստարկված դատողությունն է: Հակափաստարկ չունես, դրա համար ես ասում, որ դու հայրենասեր ես, իսկ քեզ դեմ չմտածողը դավաճան: Քաղաքական հարցերի դատա-հոգեբանական վերլուծություն ես կատարում, դրանց մակերեսային հենքով ախտորոշում ու բուժման մեթոդներ առաջարկում: Թե՞ կարծում ես դիվերսանտիզմին մարտնչող հայրենասիրության կերդարանք տալով կարելի է հարցադրումից խուսափել: Ավելի որոշակի: Ի՞նչ ես կարծում, ես ինձ թույլ կտա՞մ քեզ հետ վիճելու ռուսական կամ ռուս բանասիրության հարցերի շուրջ: Պատասխանը դարձ է, եթե մենք մտավորական ենք՝ հնարավոր չէ: Կամ եթե նույնիսկ հնարավոր է, ապա դա կլինի դրոֆեսիոնալի (քո կողմից) եւ դիլետանտի (իմ կողմից) վեճ: Դու երեւի գիտես, որ քսան տարի, կամ ավելի, ուսումնասիրել եմ 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարասկզբի դատությունն էջ առ էջ: Ասել կուզեմ, որ դարասկզբի հայ-ադրբեջանական առնչությունների մասին քո վերլուծությունն իմ մասնագիտությունն է: Ճիշտ հասկացիր, ոչ ոք քեզ վիճելու իրավունքից չի զրկել. բայց ընդունիր նաեւ, որ քաղաքական դատությունը դիլետանտի (իմ կողմից) վեճ: Դու երեւի գիտես, որ քսան տարի, կամ ավելի, ուսումնասիրել եմ 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարասկզբի դատությունն էջ առ էջ: Ասել կուզեմ, որ դարասկզբի հայ-ադրբեջանական առնչությունների մասին քո վերլուծությունն իմ մասնագիտությունն է: Ճիշտ հասկացիր, ոչ ոք քեզ վիճելու իրավունքից չի զրկել. բայց ընդունիր նաեւ, որ քաղաքական դատության հարցերում դու դիլետանտ ես: Թե՞ Հելսինկիում կամ Հռոմում մի քանի անգամ Ղարաբաղի «դատը դատապանելուց» հետո քեզ ներշնչել ես, որ քաղաքական գործիչ ես, իսկ դատական. քաղաքական գծին հակադրվողները կործանված մարդիկ, որոնց հասցեին ինչ խելքդ փչի կգրես:

Քեզ եւ քո մտածելակերպի քաղաքական գործիչներին հասկանալի է հայրենիքի հանդեպ սիրո ու նվիրվածության մերկապարանոց բմբկահարումը: Դրանք բոլորը դատարկ խոսքեր են, իսկ ձեր գործունեությունից սաստանան անգամ գլուխ չի հանի: Իմը դարձ է: Դո՞ւ ինչ ես ուզում, դարձ ասա: Ուզում ես, որ Հայաստանի Գերագույն խորհուրդը որոշում ընդունի եւ Ղարաբաղին բույլ տա Ադրբեջանի հետ բանակցությունները՞ սկսել: Եթե այդպես ասեիր, հասկանալի կլիներ, որ կողմ ես հարցի կարգավորմանը: Բայց դու ասում ես, որ Հայաստանի Գերագույն խորհուրդը կոչ անի Արբեջանին բանակցություններ սկսելու Ղարաբաղի իշխանությունների հետ: Տրամաբանությունը ո՞րն է: Թե՞ էլի հերթական գաղտնի քայլն է մտակել, որը ձեզանից բացի ոչ մեկը չի հասկանում: Այ, հենց այդ խելոք քայլերով Հայաստանն ու Ղարաբաղը խճճեցիք քաղաքական այս սարդոստայնում: Ես Հայաստանի անկախանալուց հետո, երբ Ղարաբաղի հայությունն աղում էր իր հողի վրա, առաջարկեցի հերթական անգամ աշխարհին չզարմացնենք, ընդունենք Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը եւ վերջ տանք այս անիմաստ դատերազմին: Այսօր էլ այն կարծիքին եմ, որ այդ ճանապարհն այլընտրանք չունի: Հասկացեք, այլ ճանապարհով խաղաղություն չկա: Ես նույնիսկ ասեմ կուզեի որ լիներ, բայց չկա:

Չգնացինք այդ ճանապարհով: Մտնեցինք անկախության հիսանչ մեկ տարին անդեսական վարքագծով ու. քաղաքականությամբ: Այսօր էլ, երբ երկիրը փլկել է դեսը, ասում եք անմիջական բանակցությունների դաշը բաց ենք թողել: Ո՞վ է բաց թողել, ինչո՞ւ են բաց թողել: Այս հարցերը քեզ դեսք է հետաքրքրեն, դարձ ասա: Այսինքն, դու մեղավոր ես փնտրում, բայց ոչ այնտեղ, որտեղ դեսք է փնտրել: Ասում ես դրագիֆիստներ Մարդարյանն ու Բլեյանն են մեղավոր: Ի՞նչ իրավունքով ես ասում կամ ասածը կրկնում: Ո՞ւր մնաց բարոյականությունը: Երեկ ռազմատենչ Մարուխյանն էր մեղավոր, այսօր դրագիֆիստները, իսկ հետո՞: Եթե գործերն այսպես շարունակվեն, այդ հետն էլ չի երեւում: Այսքանը Բլեյանը հասկացել, դու չես հասկացել եւ դա քո ողբերգությունն է, որ նրան սալինիստ ես ասում: Այ, այս երեւույթն իսկապես ախտորոշման կարիք ունի: Ընդունենք, որ Բլեյանին դակասում է քաղաքական գործչի «շրջահայացությունը», բայց չէ՞ որ դրա փոխարեն կա քաղաքագիտական ճիշտությունը: Դու ոչ մեկն ունես, ոչ մյուսը: Եթե քաղաքական գործիչ ես ու քաղաքագետ, ապա դասախանիր հետեւյալ հարցերին: Գնացիր Հռոմ կամ Հելսինկի՝ տեսար, լսեցիր ու համոզվեցիր, որ Ղարաբաղն ու դարաբաղցին ԵԱՀԽ-ից սպասելիք չունեն: Ինչո՞ւ այդ մասին բարձրաձայն չես ասում, թե՞ ձեր գիտցածով քաղաքական գործիչը դեսք է անդայման մտածի եւ ասի տարբեր բաներ: Ասա՝ թող դարաբաղցին իմանա, որ ԵԱՀԽ-ն չի ճանաչելու Ղարաբաղի Հանրապետությունը: Նաեւ ասա, որ հողի վրա աղրելու երաշխիքներ չի տալու: Գիտես, որ դա ընդամենը դիվանագիտական խաղ է, ժամանակ սպանելու գայթակղություն: Գիտես նաեւ, որ հարցը միջազգային ասյաններում քննարկվելու ընթացքում Ղարաբաղի կեսը հայաթափվեց:

Դուք ճշմարտություն չեք ասում, ասողին էլ հայհոյում եք: Սա է քաղաքական գործչի ու քաղաքացու ձեր կեցվածքը, որը գնալով կեցության վերածվեց: Թե՞ ուզում եք, որ միջազգայնացման երկրորդ փուլում էլ Ղարաբաղի մնացած մասը դատարկվի ու սկսենք Եվրոպային հայհոյել: Կներեք, բայց ճշմարտությունը հակառակ ու ցանկալի երեսով ներկայացնելու ձեր ճչոցները ցավի վրա ցավ են բերում ու ավելացնում: Ախտորոշել չգիտեք, ո՞նց եք բժշկելու: Թե՞ ասելու եք ճակատագիր է: Ամեն ինչ արեցինք, ոչինչ չստացվեց: Ասում եմ ոչ ճակատագիր է, ոչ էլ բախտի խնդիր: Խելքի ու քաղաքական մտքի դակասության խնդիր է: Այս բաների վրա խորհեք, թե չէ հայհոյելը հեշտ է: Մտածեք, թե ինչպես կարող է դատահել, որ Ադրբեջանի ու Հայաստանի նախագահները, ունենալով հակամետ քաղաքական նոդատակներ, այսօր գտնեն, որ Ղարաբաղի հարցը դեսք է լուծվի ԵԱՀԽ-ի շրջանակներում: Չէ՞ որ երկու իրարամերժ, բայց նույնանման դատողություններից մեկը ճշմարիտ դեսք է լինի, իսկ մյուսը՝ կեղծ: Սա արդեն Մարդարյանը չի՝ ասում, որ հայհոյեք: Քաղաքական մտքին ու տրամաբանությանը վաղուց հայտնի բան է: Չեմ շարունակում փաստարկներս, որ չասեք կոմունիստ, մարքսիստ, դավաճան, հայրենիք չսիրող: Քիչ շեփորեք ձեր սերն առ հայրենիք: Հայրենասիրությունը փեշակ չէ, եւ քաղաքականության հետ էլ կապ չունի: Հենց հայրենասիրական քաղաքականության ձեռքին է կրակն ընկել Հայաստանը: Պարզ է, որ դուք ամբողջն եք սիրում ու երազում: Ես չէի ուզում ունեցածը վտանգվի: Դուք ուզում եք Ղարաբաղը ճանաչեցնել որպես դետություն: Դա իսկապես դարզ, հայրենասիրական ցանկություն է: Չեր քաղաքական մակարդակ բարձրացված սիրուց սկսվեց Ղարաբաղի հայաթափումը, որն իմ ողբերգությունն է:

Չգիտեմ, կարողացա՞ բացատրել, դավաճան չկա: Երկուսս էլ սիրում ենք հայրենիքը, բայց յուրովի: Չեր սերը գործնական չէ, որովհետեւ մանկական սիրո զգայական շրջանակներից դուրս չի եկել: Իսկ մանկական սերը խենթությունից զերծ չի լինում: Սերը եւս եթե չի հասունանում, անհաղորդ է մնում իմաստությանն ու փորձին, կարող է հիմարություններ անել ու վնասել սիրեցյալին: Այս ամենը հայ հողի վրա եղել է բազում անգամ: Հայ հասարակական-քաղաքական մտքի դարգունակությունը եւ քաղաքական հանրահայտ չափանիշներին չհամընկնելը դայմանավորված են հենց առ հայրենիք այս զույգ եւ զոհողության դատրաստ սիրով: Հիմա հասկացա՞ր, թե ինչու եմ ասում, որ սիրելով էլ են կործանում: Չնայած դրան ես դավաճան չեմ անվանում: Պարզապես ասում եմ, մի՛ մրգնեք ժողովրդի բանականությունը: Թողեք գոնե ժողովուրդն ընտրություն կատարի: Վերջապես հասկացեք, որ բանականության ու զգացմունքների միջեւ այս վեճն իմ ու քո վեճը չէ: Սա Վարդանի ու Վասակի վեճն է: Վեճն է Մամիկոնյանների ու Բագրատունիների: Նաեւ վեճն է Ահարոնյանի ու Արամ Մանուկյանի: Ուրեմն սա կուսակցական վեճ չէ: Աշխարհընկալում է: Դու իմ գործունեությունից գիտես, որ ես հասատուն կանգնած եմ վերջինների դիրքերում: Դա ինձ համար քաղաքական սկզբունք է:

Որքան հիշում եմ, տանից ուղիղ մեկ տարի առաջ, երբ հրապարակեցի «Եթե չսթափվենք այսօր, դարը կփակենք այնպես, ինչպես սկսել ենք» հոդվածը, դու խորհրդարանում ասացիր, թե Սարդարյանին ճանաչում ես որպես ազնիվ ու սկզբունքային գործչի: Նաեւ չմոռացար ասել, որ եթե նա դեմ է ձեր վարած (ճիշտ գնահատական էր) քաղաքականությանը, թող հրաժարական տա: Ես հետեւեցի քո խորհրդին: Հնարավոր բոլոր միջոցներով փորձեցի առաջացնել, որ քաղաքական կուրսը սխալ է եւ արդյունքի չհասնելով հեռացա: Այնպես որ, այսօրվա Հայաստանի ու Ղարաբաղի ողբերգական վիճակը Չեր վարած քաղաքականության հետեւանք է, որի մասին ես Չեզ զգուշացրել էի ուղիղ մեկ տարի առաջ:

Հասկանում ես չէ՞, որ ձեր ասելով միայն քեզ նկատի չունեմ: Տեսակի խնդիր է: Հոգեկան երեւույթ է իսկապես: Տեսնո՞ւմ ես, որ քո առաջ բացած թեզն ունի ավելի տրամաբանական հակաթեզ: Պրոֆեսոր ես, գրիչ վերցնելուց առաջ մտածիր, թե ինչ ես գրում: Չէ՞ որ քո ուսանողներն էլ են կարդում գրածդ: Իմացիր, որ մարդկության բոլոր մեղքերից Աստված ամենախիստ պատժում է հիմարությունը: ■

Ռուսաստան

Ամորոշ անամոթ երկնքում կամ ո՞ւմ վրա է հենվելու Ելցինը

«Օստանկինո» հեռուստաընկերության ղեկավար Եգոր Յակովլեւի հեռացման հրամանը հանկարծահաս ամորոշ եր անամոթ երկնքում: Միամտություն է կարծել, որ Օսիայի ղեկավար Կուլումբեկովի դժգոհությունը իրական պատճառն է Բորիս Ելցինի կողմից ընդունված որոշման: Որքան էլ որ Ելցինի ներկայացնում են իբրեւ «ռուս մուժիկի» դասական կերպար, որը վրդովմունքի կամ տվյալ պահի տրամադրությանը համապատասխան կարող է չհավասարակշռված հայտարարություններ անել ու որոշումներ ընդունել, այնուամենայնիվ ցայսօր նրա «իմպրովիզների» տակ միշտ ակնհայտ քաղաքական հաշվարկ է եղել:

Նման մի իրավիճակ արդեն եղավ Բուլղարիա Ելցինի այցելության ժամանակ, երբ Ռուսաստանի նախագահը մամուլի ասուլիսում հայտարարեց, թե իր երկիրը պատշաճաչափ կճանաչի Մակեդոնիայի անկախությունը: Շատերը փորձում էին ներկայացնել այդ որոշումն իբրեւ Բուլղարիայում բոլոր սլավոնական ժողովուրդներին գեղեցիկ ուեւերաս անելու Ելցինի կամայական ցանկության հետեւանք, թեեւ հետագայում իրադարձությունների զարգացումը ապացուցեց նման տեսակետների ողջ սնանկությունը: Ինչ-որ մեկը շատ է ուզում, որ աշխարհի ամենամեծ երկրներից մեկի նախագահի գործողություններում հասարակությունը տեսնի ոչ թե նոդատակային եւ հաշվարկված քաղաքականություն, այլ «Իվան հիմարիկի» հեքիաթի նման մի անմեղ պատմություն: Այսինքն, նա՝ նախագահ Ելցինը կարող է այս կամ այն քայլն անել, որը լուրջ հետեւանքներ ունենա հազարավոր մարդկանց համար, իսկ հասարակական կարծիքը պետք է ներողամիտ լինի, քանզի նա պարզապես այդպիսին է իր խառնվածքով՝ արագ բռնկվող եւ չհավասարակշռված:

Այն, որ Եգոր Յակովլեւի հեռացումը զբաղեցրած պաշտոնից օսինգուական հակամարտությանը նոր թափ հաղորդելու եւ ինգուշների վոս «չար» եւ «բարի» Մոսկվայի պատրանքը ձեւավորելու լավագույն եղանակն էր (հայերս արդեն անցել ենք այդ ճանապարհը եւ պետք է որ լավ պատկերացնենք դրա նոդատակները), գործի միայն մեկ ածանցյալ կողմն է: Իսկ երկրորդ կողմը Ռուսաստանի իշխանության Օլիմպոսում նշանակալից փոփոխությունների եւ դրա հետ կապված քաղաքական կուրսի փոփոխության հնարավորությունն է: Եթե հաստատվի այն տեղեկությունը, որ իրենց զբաղեցրած պաշտոններին հրաժեշտ են տալու նաեւ Գենադի Բուրբուլիսն ու Անդրեյ Կոզիրեւը, արմատական կադրային տեղաշարժերի փաստն անվիճարկելի է դառնում: Իսկ չէ որ առաջին զոհն այս նոր ալիքի որոշման: Բողոքողների շարքում են ակադեմիկոս Սախարովի այրին՝ Ելենա Բոնները, «Գլխավոր խմբագիրների ակումբը», «Վիդ» հեռուստաընկերության տնօրենների խորհուրդը եւ անգամ Ռուսաստանի Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ Սերգեյ Ֆիլատովը: Ազդեցիկ մամուլի օրգանների ներկայացուցիչները հարցականի տակ են դնում իրենց հետագա աջակցությունը անձամբ նախագահին, թեեւ խոստանում են ապագայում եւս պաշտպանել բարեփոխումների կուրսը: Այլ հարց է, թե արդյոք բարեփոխումների կուրսն ու նախագահ Ելցինը ապագայում եւս կլինե՞ն խրամատների նույն կողմում:

Դիտորդներից շատերի կարծիքով Ելցինի արագընթաց գործողությունները նոդատակ ունեն ընդդիմությանն անհրաժեշտ զիջումների գնալու ճանապարհով նախապատրաստվել համագումարին եւ թույլ չտալ, որ այն վերածվի բացահայտ դիմակայության: Բայց կա՞ն արդյոք բավարար երաշխիքներ, որ Ելցինի տակտիկական զիջումները չեն վերածվի հետեւողական նահանջի: Եթե այսօրվա իրողություններում Ելցինին դրդեն կտրուկ աջ թեքել Ռուսաստանի կառավարական նավի ղեկը, ապա դա մեծ հարված կհասցնի պետականության հիմքերին, առանց անհրաժեշտ գաղափարական հիմքերի, սոցիալական ծեւավորված բազայի եւ հստակեցված քաղաքական ուղու կտրուկ փոփոխություններ մտցնել Ռուսաստանի քաղաքականության մեջ կնշանակի արագացնել տեղաշարժերն այդ երկրում եւ նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետություններում, փլուզման եւ ապակենտրոնացման, ու դրանցից ածանցվող արյունալի իրադարձությունները դարձնելով առավել անկառավարելի:

Իրավիճակն իսկապես որ հիշեցնում է Գորբաչովի քայլերը պահպանողական ուժերի ճնշմանը դիմակայելու ուղղությամբ: Նա եւս զոհաբերեց իրեն հավատարիմ գործիչներին, վերջում հայտնվելով լիակատար վակուումի մեջ: Կբավարարի՞ արդյոք Ելցինի ողջախոհությունը, որպեսզի պատմությունը չկրկնվի:

Առաջիկա ամիսներին բոլորի հայացքը հառված է լինելու դեպի Մոսկվա, ուր կամ կվերակենդանանա նեոբոլշեւիկյան դիակը, կամ ռուսական ազգայնականությունը արագընթաց տեմպերով կներկվի դարչնագույնով, կամ կշարունակվի այս դաժան, բայց բնական ընթացքը, որն ի վերջո տանելու է ռուսական ազգային պետության ստեղծմանը: Համենայն դեպս, ինչ-որ բան անպայման կփոխվի եւ այդ փոփոխությունը հազիվ թե դական լինի Ռուսաստանի եւ մյուս հանրապետությունների համար:

Տ.Հ.

digitised by A.R.A.R.@

Տեղական

ՃԱՊՈՆԱԿԱՆ ՄԵՆԵՋՄԵՆՏԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՏԻՊՈՒԹՅՈՒՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՄԻՋՈՑ

ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ

Ազգային հոգեբանությունը եվ մենեջմենտը

1980 թվականի ամռանը ամերիկյան NBC հեռուստացանցը ցուցադրեց ավելի քան ղեռճախոս անունով մի հեռուստատեսային կինոնկար՝ «Երբ Ճապոնիան կառողանում է, հաղա մե՞նք ինչու չենք կառող»: Նմանօրինակ հարցադնդումը սղառիչ բնութագրում է ամերիկացիների հոգեբանության բեկումնային ղահը. երկար ժամանակ խամահելով ճապոնական ծրատադրանքը, նույնիսկ կազմակերտելով ավտոմեքենաների ցուցադրական շոու-ջարդեր, ճապոնամերժությունը դրվատելով իբրեւ շիտակ հայրենասիրություն, Ամերիկան ի վերջո հարկադրված եր ընդունել ճապոնացիների նախանձելի նվաճումները եւ անառարկելի առավելությունները:

Ինչպես հայտնի է, երկրորդ համաշխարհային ղատերազմի ավարտից անմիջապես հետո ԱՄՆ-ի շահերը թելադրում էին Ճապոնիայի տնտեսության վերականգնում որպես կրտսեր ղարտնյորի սեփական աշխարհաքաղաքական նպատակների կենսագործման մեջ: Ամերիկյան մասնագետները, տեխնիկան, գաղափարները հորդեցին Ծագող արեւի երկիր: Եւ դժվար թե ամերիկացիները ենթադրեին, որ ակամայից նպաստում են իրենց ապագա հզոր մրցակցի ծնունդին, քայքայված երկրի զարմանահրաշ թռիչքին, որը հենց այդպես էլ կնվիեց «ճապոնական հրաշք»: Բավական է միայն հիշատակել, որ ներկայումս ամեն երկրի տեխնոլոգիական մակարդակը բնութագրող էլեկտրոնային արդյունաբերության մեջ ճապոնական ֆիրմաները վաղուց արդեն համաշխարհային գերիշխող դիրք են գրավում՝ նեղելով նաեւ ամերիկյան ֆիրմաներին:

Ճապոնական հատարակության վերածննդի եւ տնտեսության զարգացման բարձր ու կայուն տեմպերի մեջ բացառիկ դեր է խաղում ճապոնական մենեջմենտը: Վերջինիս մասին հատկապես 70-ական թթ. սկզբից շատ է ասվել ու գրվել: Այլազգի շատ հետազոտողներ են ձգտել վերհանել ճապոնական մենեջմենտի առանձնահատկությունները եւ փորձել դրանից ուսանելի դասեր քաղել իրենց երկրների համար: Ընդսմին, ամերիկյան հեղինակները որպես կանոն չեն մոռանում հիշատակել, որ մենեջմենտն Ամերիկայից է մուտք գործել Ճապոնիա:

Իրոք, այդպես է (ինչպես նաեւ այն, որ աշակերտը գերազանցեց ուսուցչին): Ճապոնացի տեսաբաններն իրենք էլ չեն թաքցնում, որ ժամանակին ջանասիրաբար ուսումնասիրել են թեյլորիզմը եւ դրան հաջորդած մյուս գաղափարներն ու փորձը: Սակայն նույնիսկ ամերիկյան հեղինակներն են խոստովանում այն հանգամանքը, որ Ճապոնական մենեջմենտը բնավ կուրորեն չոգաբերեց թեյլորիզմը, ոչ էլ հետթեյլորյան գաղափարները, մանավանդ «մարդկային հարաբերությունների» տեսության հիմնադրույթները, որոնք առավել հարազատ էին ճապոնական աշխատելակերտի բնույթին:

Այնինչ (սա կարեւոր մեր թեմայի տեսակետից), երբ Արեւմուտքն իր համար հայտնագործեց, ճապոնական ֆիրմաներում բարձր արդյունավետությամբ գործող այսպես կոչված «որակի խմբակները» եւ փորձեց դրանք տեղափոխել Եվրոպա եւ Միացյալ Նահանգներ, ծագեցին լուրջ խնդիրներ: Ճապոնական մենեջմենտում 60-ական թվականների սկզբից լայն տարածում ստացած «որակի խմբակները» իրենցից ներկայացնում են միեւնույն արտադրամասի գործավորների ոչ մեծ խումբ, որտեղ կամավորական հիմունքներով աշխատողներն իրենք են վերահսկում արտադրանքի որակը, ներդնում նորարարական առաջարկություններ, նպաստում տեխնոլոգիայի կատարելագործմանը, լուծում նաեւ առանձին գործառնական խնդիրներ (ասենք, որ ներկայումս Ճապոնիայում գործում են շուրջ մեկ միլիոն այդպիսի խմբեր, դրանցում ընդգրկված են 10 միլիոն մարդ, տարեկան ապահովում են մինչեւ 30 միլիարդ դոլլարի օգուտ): Եւ ահա 70-ական թթ. սկզբից ամերիկյան որոշ ֆիրմաներ, ամենից առաջ «Լոքհիդ միսլզ»ը եւ «Ստեյս քամփրնի»ն սկսեցին ուշի-ուշով ուսումնասիրել եւ իրենց մոտ ներդնել ճապոնական «որակի խմբակները»: Եւ... սկզբնական ոգեւորությունը շուտով մարեց, քանի որ դրանք չունեին նույն արդյունավետությունը:

Այս երեւույթի բուն պատճառի գիտակցումն ավելի ուշ եղավ: Ինչպես եզրակացնում է ամերիկյան խոշոր մասնագետ, մի շարք առաջատար ֆիրմաների նորամուծությունների գծով խորհրդատու Ռոբերտ Լեռերը, այլ կերպ չէր կարող լինել. «Մեր մշակույթները չափազանց տարբեր են, մեր սոցիալական արժեքները չափազանց տարբեր են, կազմակերպությունների տիպերը անհամեմատելի են, վերջապես ճապոնացիներն ավելի համասեռ ազգ են, քան մենք»:

Նույնը կատարվեց ճապոնական ավտոմոբիլաշինական «Տոյոտա» ֆիրմայի կարծես զուտ տեխնոլոգիական նորարարությունը («ճիշտ ժամանակին» եղանակը, կազմված անհրաժեշտ քանակի արտադրամասերի առաքման հետ հարկավոր պահին եւ հարկավոր քանակությամբ, ինչը վերացնում է պահեստավորման ծախսերը եւ այլն) արեւմտյան ֆիրմաների կողմից ընդօրինակելիս: Էքսոմշակութային առանձնահատկությունները դարձյալ իրենց զգացնել տվեցին:

Վերադառնանք մեր բուն խնդրին՝ ճապոնական մենեջմենտի խաղացած դերին ազգային ինքնատիպության պահպանման եւ ամրապնդման մեջ:

Գաղտնիք չէ, որ 1945 թ. Ճապոնիան կանգնած եր ազգային ինքնությունը կորցնելու աղեղի «նեղգաղութացման» շեմին (ինչպես որ այժմ մենք): Հաղթանակած ԱՄՆ-ը թե հրավերով, թե անկոչ հյուրի պես սկսել եր ներխուժել ճապոնական կյանքի գրեթե բոլոր ոլորտները: Ամերիկյան մասնագետների եւ տեխնոլոգիայի հետ ներմուծվում էին ամերիկյան գաղափարներ, արդեւակերպի նորմաներ, բարոյական արժեքներ: Հենց ճապոնացիների մի մասն ինքը կամա (օտարամոլներ կան բոլոր ազգերի մեջ) թե ակամա յուրացնում եր այն ազգի վարքուբարքը, որն իրեն օգնում եր վերականգնել ավերված տնտեսությունը:

Ճապոնական մենեջմենտի ժամանակակից տեսաբանները հետադարձ հայացք նետելով այդ ժամանակաշրջանին զտնում են, որ զուտ ամերիկյան մեթոդները չէին էլ կարող արդյունավետ լինել, քանզի օրգանապես խորթ էին ճապոնական ֆիրմաներին բնորոշ մշակութային առանձնահատկություններին: Կառավարման ճապոնական ոճի ձեւավորման ընթացքում, վկայում է օրինակ Տերույա Նագայոն, «կառավարման ամերիկյան մեթոդների անմիջական կիրառությունն անհաջողության մատնվեց»: Թեպետ նույն հեղինակը եւ շատ ուրիշներ ընդունում են, հանուն արդարության, որ ամերիկյան գաղափարներն էական դեր են խաղացել ճապոնական ուրույն մենեջմենտի ձեւավորման մեջ:

Խնդիրն այստեղ հավանաբար ամերիկյան գաղափարների ընկալման եւ կիրառման յուրահատկությունն է: Ակնհայտ է, որ վճռորոշ է եղել զտվելու, սեփականը պահպանելու, օտար եւ խաբարող ազդեցություններին դիմակայելու դիրքորոշումը:

Բանն այն է, որ հետպատերազմյան տարիներին ամերիկանացման վտանգը լրջորեն-ըմբռնեցին հատկապես ճապոնացի երիտասարդ գործարարները, ովքեր մասնավորապես համախմբվել էին 1946 թ. ստեղծված «Դոյկայ» խմբի շուրջը: Դրանք նոր մարդիկ էին, որոնք ցանկանում էին օգտվել նոր հնարավորություններից եւ զտնել Ճապոնիայի զարգացման նոր ուղին: Շրջադարձային եղավ տասը տարի անց, 1956 թ. այս խմբի առաջարկած հռչակագիրը, որն անվանված եր «Հասարակության առջեւ բիզնեսի ղեկավարների պատասխանատվությունը»: Հիմնական գաղափարն իրք այն եր, որ ազգին նորացնողը, նոր ուղիով առաջնորդողը պիտի գործարար մարդիկ լինեն՝ իրենց նոր փիլիսոփայությամբ: Ճապոնական մենեջմենտի ձեւավորումը հենց եղավ այն զորեղ պատվարներից մեկը, որով ճապոնացի ազգը ոչ թե սոսկ դիմագրավեց օտար ազդեցությունները, այլեւ կարողացավ ուրույն ազգային հիմքի վրա սինթեզել աշխարհի առաջավոր երկրների փորձը, այդ թվում ամենից առաջ աշխատանքի կազմակերպման ասպարեզում:

Ինչպես ասվել է, ամերիկյան մենեջմենտի ոչ մի տեսաբան հատուկ չի անդրադարձել ազգային հոգեբանության առանձնահատկությունների հարցին: Ոչ դասական մենեջմենտի ներկայացուցիչների գրքում, ոչ էլ ժամանակակից առաջատար տեսաբանների աշխատություններում այն չի շոշափվում: Ընդհակառակը, չկա ճապոնական մենեջմենտի որեւէ տեսաբան կամ դրակտիկ գործիչ, որի գրքերում, դասդողություններում, եզրակացություններում ցայտուն չերեւա ազգային առանձնահատկությունների հաշվառումը:

Իսկ հատկապես հետպատերազմյան տարիներին, երբ ձեւավորվում եր ճապոնական մենեջմենտը, բացառիկ տեղ է հատկացվել ազգի ինքնուրույնության պահպանման խնդրին: Այժմ էլ բավական է գեր բռուցիկ ծանոթանալ ճապոնական մենեջմենտին՝ համոզվելու համար, թե ինչպես է տնտեսական արդյունավետությունը շաղկապվում էքսոմշակութային առանձնահատկությունների նրբին օգտագործմանը:

Ճապոնական մենեջմենտի դրույթների հիմնական ուղղվածությունը ճապոնացիներին բնորոշ կոլեկտիվ աշխատանքի հակվածության օգտագործումն է: Ճապոնական ավանդական մշակույթի գլխավոր իդեալը մարդկանց փոխկապակցվածությունն է՝ սերունդների ժառանգորդումը, նախնիների պաշտամունքը, ընտանեկան կյանքի ներդաշնակությունը, համայնքի զգացողությունը, աշխատանքային կոլեկտիվի համերաշխությունը: Այստեղից էլ ածանցվում են ճապոնացուն բնորոշ մտածելակերպի եւ գործելակերպի առանձնահատկությունները՝ հարգանքն ավագների նկատմամբ, համայնքի հետ կապվածության զգացումը, շրջապատի մարդկանց գնահատումը՝ ելնելով հասարակության հիերարխիկ կառուցվածքում նրանց գրաված դիրքից, սեփական ինքնագնահատականը՝ առավելապես աշխատանքային կյանքի՝ սեփական ֆիրմայի հետ նույնացման միջոցով, հակվածությունը կոլեկտիվ որոշումների կայացմանը, խմբային պատասխանատվությունը:

Ճապոնական մենեջմենտի հիմնական սկզբունքները ոչ միայն արտահայտում են նշված առանձնահատկությունները՝ ապահովելով առավելագույն տնտեսական արդյունավետություն, այլեւ հակադարձ ազդեցություն են գործում՝ ամրապնդում են դրանք: Այդ բանին նպաստում են «ցմահ վարձման» դրակտիկան, վարձատրության չափի մեջ աշխատանքային սպաժի վճռորոշ դերը, զանազան համատեղ միջոցառումները՝ թե աշխատավայրում եւ թե աշխատանքից դուրս ուղղված միասնական ընտանիքի զգացողության ձեւավորմանը: Ազգի համերաշխության ապահովմանն է նպաստում դեստության տնտեսական քաղաքականությունը, մասնավորապես փոքր եւ միջին ձեռնարկատերերին ցույց տվող աջակցությունը, ներկայումս միջին եւ փոքր ձեռնարկություններին է բաժին ընկնում երկրի ամբողջ արդյունաբերության՝ 94 տոկոսը (իսկ դա նշանակում է խուսափել հարստության եւ չքավորության ծայրահեղ բեւեռացումից):

Կառավարման իրենց փիլիսոփայության մեջ ճապոնական մենեջմենտի ղեկավարները շեշտադրում են ոչ թե մեն-միայնակ աշխատավարձի դրդապատճառը, այլ ձեռնարկությունների գործունեության սոցիալական իմաստը, ձեռներեցների սոցիալական դատասխանատվությունը: Բնութագրական է ճապոնական մենեջմենտի հիմնադիրներից մեկի՝ Կոնոսուկե Մացուսիտայի այն դատանջը, որ «յուրաքանչյուր ընկերություն, անկախ իր չափերից, դետք է ունենա որոշակի նպատակներ, որոնք տարբերվում են շահույթի ստացումից, որոնք արդարացնում են նրա գոյությունը»: Նույն կերդ ճապոնական մենեջմենտի նահապետ համարվող 90-ամյա Կաձումա Թատեիսին («Օմրոն կորդորեյշն»ի հիմնադիրն ու դրեզիդենտը) հաջողության գլխավոր դայմանների շարքում թվարկում է ընկերության հստակ ձեւակերպած հանգանակը (կրեդոն), «ձեռնարկության ոգու» ստեղծումը:

Միասնական նպատակների, ներդաշնակ, համերաշխ ընտանիքի ստեղծումը ձեռնարկություններում մենեջերի ամենօրյա, անդուլ աշխատանքն է: Ահավասիկ հռչակավոր «Սոնի» ֆիրմայի դրեզիդենտ Ակիո Մորիտոյի հակիրճ ձեւակերդումը՝ «Ճապոնացի մենեջերի ամենագլխավոր խնդիրը աշխատակիցների հետ նորմալ հարաբերությունների հաստատումն է, կորդորացիայի նկատմամբ որդես հարազատ ընտանիքի վերաբերմունքի ձեւավորումը, այն ըմբռնման սերմանումը, որ բանվորների եւ մենեջերների բախտը միասնական է»:

Եթե ասենք ֆիրմա տեսաբաններն իրենք վկայում են, որ «Ֆիրմական շատ արտադրական կոլեկտիվներում ավանդաբար պահպանվում է այն կանոնը, որ անձնական խնդիրները չդետք է բերել աշխատավայր եւ դրանք չդետք է ազդեն աշխատանքի վրա», ապա ճապոնական մենեջմենտում ճիշտ հակառակն է, այստեղ խիստ կարեւորվում է աշխատանքի եւ անձնական կյանքի, ընտանիքի միջեւ «կամուրջներ գցել», աշխատանքային եւ ոչ աշխատանքային ասպարեզների հնարավոր մերձեցումը:

Դասդիարակության ամբողջ համակարգն ուղղված է կոլեկտիվիզմի, համայնքի զգացողության սերմանմանը: Բերենք մի բնորոշ հատվածություն. երբ ամեն մի ամերիկացու օրորոցից սկսած դասդիարակում են առաջինը լինելու, «չեմդիոն» դառնալով ոգով («դու ամեն ինչում դետք է առաջինը լինես»), ապա ճապոնացուն բոլորին հավասար լինելու, «չցցվելու» («ամեն ինչում դու ոչ մեկից չդետք է հետ մնաս»): Ճապոնական ֆիրմաները շատ ճկուն օգտագործում են մրցակցության մեխանիզմն արտադրության զանազան օղակների, բաժինների միջեւ, սակայն ամեն ինչ անում են՝ տվյալ օղակի ներսում, նույն կոլեկտիվի շրջանակներում մրցակցության դրական դրդակիչ ազդեցությունը բացառելու համար:

Արեւմտյան մենեջմենտի տեսության շրջանակներում միայն 70-ական թվականների սկզբից շրջանառության մեջ դրվեցին «աշխատանքն ինքնին» տեսությունը (հիմնական գաղափարն այն է, որ ոչ թե տնտեսական վարձատրումը, այլ հենց բուն-իսկ աշխատանքն է մարդու վարքի ամենահզոր դրդապատճառը), բանվորի նկատմամբ «վստահության սկզբունքը», արտադրության դեմոկրատացման գաղափարները եւ այլն: Մինչդեռ դրանք օրգանապես բնորոշ են ճապոնական մենեջմենտին, ուստի վերջինս արհեստական դրդավաստումների կարիք չունի: Օրինակ, վերցնենք որակի կառավարման խնդիրը: Ճապոնիայում 1949 թ. ստեղծվել եւ գործում է որակի կառավարման մերդոդների ուսուցման համակարգը: Այստեղ դասընթացը գործում է վեց ամիս (համեմատության համար արեւմտյան շատ ֆիրմաներում նախատեսված է 5-10 օր), ընդգրկում է բոլոր կատեգորիաների աշխատողներին (այնինչ Արեւմուտքում այդ ուսուցումը լոկ ինժեներների համար Ե): Այդպիսի տարբերությունը բխում է բուն աշխատողի նկատմամբ վերաբերմունքից, որն էլ իր հերթին արդյունք է ազգային եւ մշակութային տարբերությունների: «Արեւմուտքում, բացառում է ճապոնական մենեջմենտի առաջատար տեսաբան Կաուրո Իսիկավան, շեշտը դնում են ուսուցման արտադրական կողմի վրա՝ նպատակ ունենալով բանվորների մեջ ձեւավորել որոշակի հմտություններ, որոնք կարող են օգտագործվել այս կամ այն ֆիրմայի կողմից: Իմ կարծիքով, մենք բանվորներին դետք է դարձնենք բազմակողմանիորեն կրթված մարդիկ: Մենք դետք է նրանց սովորեցնենք մտածել, ապա՝ ուղղորդենք նրանց մտածողությունն անհրաժեշտ հունով»:

Կարելի է շարունակել այս համեմատությունը, ճապոնական մենեջմենտին բնորոշ առանձնահատկությունների վերլուծությունը: Սակայն առավել հետաքրքիր ու մեզ համար ամենաուսանելին կարծում եմ այն հանգամանքն է, որ անգամ այսքան ցայտուն տարբերություններից, նույնիսկ ակնհայտ հակադրություններից հետո ճապոնական մենեջմենտում այսօր դրված է «ճապոնացիների ճապոնացման» խնդիրը (Չին-Իչի Տակեձավա): Սա, կրկնում եմ, ես կհամարեի ճապոնական մենեջմենտի դատմության եւ տեսության հետ այս բուռցիկ ծանոթացման ամենակարեւոր դասը մեզ՝ հայերիս համար: Թվում է, թե ով, բայց ճապոնացիք բնավ անհանգստության հիմք չդետք է ունենային: Մինչդեռ դարզվում է, որ իրենց՝ ճապոնացիների համար ամերիկանացմանը դիմագրավելու խնդիրը 90-ականների սկզբին նույնքան կարեւոր է, որքան 40-ականների վերջին: Մի խնդիր, որի կարեւորությունը մենք դեռ կարծես չենք էլ գիտակցում ամբողջ ծավալով: ■

(շարունակելի)

digitised by A.R.A.R.@

Պատմություն եւ ներկա

ԴԵՌ ՄԱՆԿՈՒՑ ԵՆ ՄԵԶ ԶԳՈՒՇԱՑՐԵԼ. ԱՂՎԵՍԸ ՀԱՂԹՈՒՄ Է ԱՌՅՈՒՇԻՆ

Ճշմարտությունն անսովոր եւ կաստիճ անընդունելի է մարդկանց մեծամասնության համար, բայց... այն կա: Ազգերի փոխհարաբերություններում դասակարգային, սոցիալական, կրոնական ու գաղափարական տարբերություններն ու հակասություններն իրականում այնքան արմատական չեն, որքան դրանց աշխարհաքաղաքական բահերը...

Այս առնչությամբ արժեր ընթերցողի ուշադրությունը սեւեռել ԳԴՀ-ի հակահետախուզության արդեն նախկին պետ Մարկուս Վոլֆի «Երեքը 30-ականներից» («Трое из 30-их», «Прогресс», կամ «Die Troika», 1987) աշխատության վրա:

Իրականում Վոլֆի գրքում ոչ թե երեք (սրանցից մեկն ու շատ կարեւորը հենց ինքը Մ. Վոլֆն է), այլ ավելի շատ հերոսներ կան:

1932-36 թթ. արտասահմանից եկան եւ Մոսկվայում բնակություն հաստատեցին երեք նշանավոր կոմինտերնականների՝ ԱՄՆ-ից կոմունիստական ազդեցիկ լրագրող Լուի Ֆիշերի, Գերմանիայից՝ այն ժամանակներում հանրահայտ կոմունիստ-գրող Ֆրիդրիխ Վոլֆի եւ նրա հայրենակից, խոշոր կուսակցական գործիչ, «կոմինտերնի կաղավոր» Վիլհելմ Վոլֆսի ընտանիքները: Սրանց այնժամ դեռ բոլորովին պատանի ժառանգները՝ Ջորջ-Յուրա եւ Վիկտոր Ֆիշերները, Մարկուս-Միշա եւ Կոնրադ Վոլֆերը, Լոտար Վոլֆսը, դարձան սեր մտերիմներ եւ այդպիսիք մնացին հետագա ողջ կյանքում, չնայած երկարատեւ բաժանումներին:

Նշված աշխատանքում մեջբերում է արված Էլեոնորա Ռուզվելտի (նախագահի կնոջ) հիշողություններից, որ ասվում է, որ 1939 թվականին Լուի Ֆիշերը դիմեց ԱՄՆ-ի նախագահին, խնդրելով **պահանջել,** որ իր ընտանիքը Մոսկվայից վերադարձվի ԱՄՆ: Անմիջապես Սպիտակ Տուն կանչվեց ԽՍՀՄ դեսպան Կ. Ումանսկին (Ի. Էրենբուրգի մտերիմ ընկերը) եւ հարցը կարգավորվեց:

Էլեոնորա Ռուզվելտը պատմում է նաեւ, թե ինչպես տասը տարի առաջ 1949 թվականին, միասին նրանց այցելեցին եւ մնացին գիշերելու «երկու բանկագին հյուր՝ ոչն. Չերչիլն» ու երիտասարդ Ջորջ-Յուրա Ֆիշերը, այսինքն «եռյակից» մեկը:

Վոլֆի գրքում կա եւ մի հետաքրքիր լուսանկար, այնտեղ Ջորջ-Յուրա Ֆիշերի հայրը Լուի Ֆիշերը ներկայացված է Լենինի, Կամենեւի, Զինովեւի, Տոմսկու, Ենուկիձեի, Դեմյան Բեդնու ու այլոց՝ մտերիմ ընկերակցությամբ...

Բայց դառնանք զավակին:

1939 թվականին ընտանիքի հետ մեկնելով ԱՄՆ, Ջորջ-Յուրան պատերազմի վերջում արդեն ծառայում էր Պոլտավայում տեղակայված ամերիկյան ծանր ռմբակոծիչների օդանավակայանում, որպես կնոջի սպա: Պատերազմից հետո նա դարձավ պրոֆեսոր, Ռուսաստանի գծով մասնագետ եւ, ինչպես հաղորդում է Մ. Վոլֆն իր գրքում՝ «նրա բարեկամներն էին Հենրի Քիսինջերն ու Զբիգնեւ Բժեզինսկին»:

Մարկուս-Միշա եւ Կոնրադ Վոլֆերը մնացել էին ԽՍՀՄ-ում եւ Կարմիր բանակի կազմում ծառայելով՝ ռմբակոծելով ու կրակելով գերմանական «գիշերային գեղեցիկներ» կազմում ռմբակոծում էր ռուսական քաղաքներն ու գյուղերը, նրա սիրելին՝ Ցիլյա Սելվինսկայան Մոսկվայից էվակուացված գրողների հետ գտնվելով Չիստոպոլում, տեղական բաստոնում ելույթ էր ունենում Ց. Վոլֆս ծածկանունով՝ «դրանով ձգտելով պահպանել իր կուսական երազանքը», հուզված նշում է Վոլֆը... Կամ այսպիսի մանրամասն. «Կոնրադ Վոլֆը Մոսկվայում միեւնույն դասարանում էր եղել Անդրեյ Սինյավսկու՝ առաջին ընդդիմադիր գրականագետներից մեկի հետ»..., «Ջորջ Ֆիշերը սովորում էր Միկոյանի երեխաների հետ միեւնույն դպրոցում եւ ճանաչում էր հարեւան դպրոցը հաճախող Սվետլանա Ստալինային»...

Գրքի հիմնական հերոսներն ըստ էության զբաղվել են եւ «քաղաքխաղաճոով», եւ հետախուզությամբ (այդ բառի ամենալայն իմաստով): Դրանք կարծես թե գործել են բոլորովին տարբեր, երբեմն էլ հակադիր ուղղություններում: Եւ իրոք, թվում է ինչ ընդհանրություն կա «U. S. Army»-ի կապի սպայի, իսկ հետագայում «սովետոլոգի», Բժեզինսկու զինակցի եւ Կարմիր բանակի քաղաքխաղաճոի, իսկ հետագայում ԳԴՀ-ի հակահետախուզության ղեկավարի միջեւ...

Բայց ակնհայտ է մի արմատական միասնություն, որ դրանց բոլորին շաղկապում է իրար:

Ջորջ-Յուրի Ֆիշերի կրտսեր եղբայրը Վիկտորը, որ այժմ Ալյասկայի նահանգի սենատորն է եւ իր ուղին մյուսների հետ սկսել է Մոսկվայում Կոմինտերնի անվան փողոցում, 1976 թվականին ԱՄՆ-ից նամակ է գրում Գերմանական Դեմոկրատական Հանրապետություն՝ Կոնրադ Վոլֆին, իրենց շրջանակի բոլոր անդամների մասին, դրանց մեջ նշելով եւ ԳԴՀ-ի հակահետախուզության պետ Մարկուս Վոլֆին:

«Ինչքան էլ տարբեր լինենք մենք այս կամ այն առումով, միեւնույն է մեզ կապում է խորն ու ամենաոարդիակ ընդհանրությունը... Կոն, ընկեր իմ, թվում է քեզ գրում եմ ոչ այնքան քեզ հետ զգացումներս կիսելու, այլ ավելի դրանք ինձ պարզաբանելու համար: Ինձ դարձյալ աղաչեցնում է մեզ շաղկապող ուժի հզորությունը, խորությունը, որ վերադրեց բոլոր այն տարիներին ու հաղթահարեց տարածությունները...»:

Նույնիսկ այս գիրքն ընթերցած ֆեդերենին հազիվ թե ուշադրության առնի արտաքնապես գաղափարական հակադիր բեւեռներում գործող եւ հսկայական տարածություններով եւ պետական սահմաններով բաժանված հերոսների ներքին, սեր փոխշաղկապվածությունը: Առավել եւս չի ջանա «նկատել», որ սովորական մահկանացուներիս համար անհաղթահարելի խոչընդոտները դրանց համար գոյություն չունեն եւ որ պետական, հասարակարգային, գաղափարական արտաքինը դրանց համար լոկ պայմանականություն է, եղանակին պատշաճ հագուստ...

Ցավալին դա չէ:

Ոչ լոկ մտավորականության հավակնորդ, այլ նաեւ հասարակության կողմից այդպիսին ճանաչված, պատկառազդու տեսքով ու ոճով հասարակական բոլոր (նույն թվում եւ քաղաքական) հարցերի շուրջ «խորհրդաս» դատողություններ անողների մեծամասնությունը նույնպես ամբողջ վերը թվարկածը կընկալի որպես «հետադիմականների» եւ անկասկած՝ «հակասեմիների» հիվանդագին երեւակայության արդյունք, փաստերի խիստ կողմնակալ մեկնաբանություն...

Ցավալին, դժբախտությունը՝ սա է:

Վերոհիշյալներից մի մասն, անկախ պատկառազդու կոչումներից եւ կենսափորձից, իրոք չի կարողանում տեղավորել գերբարդ պատկերի ամբողջությունը, խճճված համաշխարհային պատմաքաղաքական որեւէ մանրամասնի մեջ՝ մինչեւ Մակեդոնացու մարտակառքի լծասարքը: Իսկ մի մասը, համոզված եմ, հիանալի գիտակցելով առնվազն վերջին հազարամյակի պատմաքաղաքական գործընթացի եւ այն կառավարող ուժերի էությունը, «խոհեմաբար» լռում է:

Ինչպես առաջինների սահմանափակությունն ու անկարողությունը, այնպես էլ այլոց «խոհեմությունը» միշտ էլ ծայրահեղ բանկ են նստել բոլոր ժողովուրդների, նույն թվում եւ մեր ժողովրդի վրա:

Նշված գործոնն այսօր շատ ավելի աշխուժացած է, շատ ավելի զորացած: Աշխարհում գրեթե ընդդիմադիր ուժեր չեն մնացել: Այս պատճառով «խոհեմների» քանակն անհամեմատ մեծացել է, իսկ տգեղներ ու վարձկաններ միշտ էլ պահանջվածից ավելի են եղել...

Հ. ՎԱՍԻԼՅԱՆ

Մեջբերում Արեւելք

Իրանի ֆինանսա-բյուջետային քաղաքականությունը 1991-1992 թթ.

1991-92 թթ. Իրանի կառավարությունը ջանքեր է գործադրում ֆինանսական կարգադրություն հաստատելու եւ բյուջեի կառուցվածքային բարեփոխումներ կատարելու ուղղությամբ: Ընդհանուր առմամբ բյուջեի ծախսերն ու եկամուտներն ավելի հավասարակշռված էին, քան նախկինում: Աճել էր ավելի քան 93 տոկոս եկամուտ, ինչը ծրագրված էր բյուջեի մասին օրենքով: Պետության եկամուտների ընդհանուր աճը կազմել է 23 տոկոս, իսկ եկամուտի գումարը հավասար է եղել 4,6 մլրդ ամերիկյան դոլլարի: 63 տոկոսանոց աճի առկայությամբ այդ եկամուտները կազմել են 1,85 մլրդ ամերիկյան դոլլար, իսկ ոչնավթյան ընդհանուր եկամուտի մեջ դրանց կշիռը 30,1 տոկոսից աճել է մինչեւ 39,9 տոկոս 1991-1992 թթ.: Հաշվետու շրջանում Իրանի կառավարությունը շարունակում էր ընդլայնել սոցիալական ծրագրերի ծավալը, դրանց վրա կատարվող ծախսերը մեծացնելով 24 տոկոսով: Երկրի բարեկարգմանն ուղղված սոցիալական գործունեության ընդլայնումը վերջին տարիներին հանգեցրել է պետական ծախսերի ընդհանուր ծիրում այդ ծախսերի բաժնի մեծացմանը 1988-1989 թթ. 19,4 տոկոսից թթ. մինչեւ 31,3 1991-1992 թթ:

Ընդհանուր առմամբ հաշվետու տարում Իրանի պետբյուջեի դեֆիցիտը սահմանափակվել է 793 մլն. ամերիկյան դոլլարով (բոլոր պետական ծախսերի 14,6 տոկոսը) վերոհիշյալ օրենքով նախատեսվածից: Իրականացվել է դրամական համակարգի բարեփոխումների նոր փուլ, որի ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել, որ բանկային ռեսուրսները տրամադրվեն իրական արտադրանքի բողարկմանը. բանկային ռեսուրսների եւ վարկային արտոնությունների 37 տոկոսը տրամադրվել է արդյունաբերական ու լեռնարդյունաբերական ոլորտին, 32 տոկոսը բնակարանային ոլորտին, 20 տոկոսը գյուղատնտեսությանը եւ 11 տոկոսը առեւտրի եւ ծառայությունների ոլորտին:

Այդպիսով, բանկային արտոնությունների 89 տոկոսը տրամադրվել է արտադրական ոլորտին եւ միայն 11 տոկոսն է բաժին ընկել առեւտրին ու ծառայություններին: Ընդհանուր պետական պարտքն առաջվա նման աճում էր: Նրա մնացորդը աճել է 9,7 տոկոսով, այսինքն 1,05 մլրդ ամերիկյան դոլլարով: Բանկային պարտությունների մեջ ոչ պետական ոլորտի բաժինը, որը 1988-1989 թթ. 36,1 տոկոս էր, 1991-1992 թթ. արդեն հավասար էր 50,8 տոկոսի: Կանխիկ դրամի էմիսիայի աճը կազմել է 24 տոկոս:

Բնակչության դրամատոմսերի ու մեծաղադրամի բաժինը 17,9 տոկոսից (1990-1991 թթ.) այս տարի նվազել է մինչեւ 16 տոկոս: Ոչ պետական ոլորտի բանկային ավանդները հաշվետու տարում ընդհանուր առմամբ աճել են 27,6 տոկոսով, երկարաժամկետ ներդրումները՝ 31,5 տոկոսով: Անտոկոս վարկերի ավանդների ծավալը նույնպես աճել է 34,2 տոկոսով: Պետք է ենթադրել, որ դա հետեւանք է Իրանում գործող «Առանց վաշխառության բանկերի մասին» օրենքի: ■

Լուրերի Հոսք

Բուլղարիան «անմասն է» Պապի դեմ մահափորձից

RFI կայանը հաղորդում է, որ Սոֆիայում գործող իրավաբանների միջազգային հանձնախումբն ուսումնասիրելով Բուլղարիայի նախկին ՊԱԿ-ի եւ իշխող կուսակցության գաղտնի արխիվները, հանգել է այն եզրակացության, որ Բուլղարիան մասնակցություն չի ունեցել Հռոմի Պապ Հովհաննես-Պողոս II-ի դեմ կատարված մահափորձին: Իրավաբանները հնարավոր են համարում ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Գերմանիայի եւ Մեծ Բրիտանիայի մասնակցությունը, ուր յուրաքանչյուրը հետապնդում էր իր քաղաքական շահերը:

Միտերանը ժամանեց Իսրայել

RFI կայանը հաղորդում է, որ պաշտոնական այցով Իսրայել ժամանեց Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանը: Սա նրա երկրորդ այցելությունն է Իսրայել 1981 թ. նախագահական պաշտոնը ստանձնելուց ի վեր: Նախատեսվում է, որ նա հանդիպումներ կունենա նախագահ Հերցոգի, վարչապետ Ռաբինի եւ արտգործնախարար Պերեսի հետ: Երուսաղեմի Ֆրանսիական հյուպատոսարանում Միտերանը կտեսակցի նաեւ գրավյալ տարածքներում ամենահեղինակավոր արաբ գործչի՝ Ֆեյսալ Հուսեյնի հետ: Չի բացառվում, որ Ամմանում Միտերանը կհանդիպի նաեւ ՊԱԿ-ի ղեկավար Յասիր Արաֆաթի հետ: Դիտորդների կարծիքով Միտերանի այցելությունը Իսրայել եւ Հորդանան միջինարեւելյան խաղաղ կարգավորման գործընթացներում Ֆրանսիայի մասնակցության աղահովմանն ուղղված քայլերից մեկն է: Վարչապետ Ռաբինը լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարել է, որ մեծ կարեւորություն է տալիս ինչպես Ֆրանսիայի, այնպես էլ ողջ Եվրոպայի ակտիվ մասնակցությանը շրջանի խնդիրների հանգուցալուծման հարցերում, սակայն Ռաբինը գտնում է, որ Միտերանը պետք է հրաժարվի երրորդ աշխարհի երկրների եւ ժողովուրդների՝ նկատմամբ իր ունեցած քուլությունից, նեռայալ պաղեստինցիները, եւ հակվի դեպի խնդիրների պատկերացման իսրայելյան տարբերակը: Այս դեպքում, գտնում է Ռաբինը, Ֆրանսիայի մասնակցությունն իսկապես արդյունավետ կարող է լինել:

Բալկանների հարցը Սամբուլի խորհրդաժողովում

Ինչպես հաղորդում է RFI կայանը, Սամբուլի խորհրդաժողովում, որին մասնակցում են Եվրոպայի 10 երկրներ, Թուրքիայի արտգործնախարար Հիքմեթ Չեթինը հայտարարել է, որ «պետք է բոլոր հնարավոր միջոցառումները ձեռնարկել, որպեսզի հարավսլավական հակամարտությունը չտարածվի ողջ Բալկանների վրա»: BBC կայանը հաղորդում է, որ Սամբուլի խորհրդաժողովի մասնակից երկրները պահանջել են, որպեսզի ՄԱԿ-ը զինված ուժեր ուղարկի Սերբիայի տարածքի բաղկացուցիչ մասը կազմող Կոսովո, Վոյեվոդինա եւ Սանդակ մարզերը ակնկալվող ազգամիջյան հակամարտությունները կանխելու համար, ինչը փաստորեն կնշանակի Սերբիայի մասնատումը: Մակեդոնիայի նախագահը խորհրդաժողովում խիստ քննադատության է ենթարկել Հունաստանին եւ հույս հայտնել, որ էդինբուրգում Եվրոպական համայնքի երկրների հերթական հանդիպման ժամանակ կվերացվեն Մակեդոնիայի միջազգային ճանաչման նկատմամբ Աթենքի հարուցած արգելքները: Նա հավաստիացրել է, որ Մակեդոնիան երբեք զիջումների չի գնա Հունաստանի անօրինական պահանջներին: BBC կայանը հաղորդում է, որ ՄԱԿ-ն արդեն իսկ որոշում է ընդունել կանխարգելման գործողությունների դիմել Մակեդոնիայում, ազգամիջյան ընդհարումները կանխելու համար այդ երկրում տեղաբաշխելով ՄԱԿ-ի զինված ուժերը: Կայանը հաղորդում է, որ անցած շաբաթ Մակեդոնիայի Այրաֆաղաք Սկոպյեում խոսվությունները ճնշելու ժամանակ սերբ ոստիկանությունն արդեն սպանել է չորս աշխատակիցների: ■

digitised by A.R.A.R.@

Հանրային Հոսք

Թուրքերը վրեժխնդրության են դատապարտվում

BBC կայանը հաղորդում է, որ Գերմանիայի թուրքերը զինված ջոկատներ են կազմում եւ դատապարտվում են վրեժխնդիր լինել օրերս սպանված երեք բրուիների համար: Գերմանիայի թուրք գործարար շրջանակները սպառնում են դադարեցնել պետությանը հարկերի վճարումը «մինչեւ իրավիճակի լրիվ կարգավորումը»: Թուրքերի բողոքներին միացել են նաեւ Գերմանիայի հրեաները, որոնք խիստ անհանգստացած են աջ ծայրահեղականության ակտիվության աճով: Այս ամիս 50 հրեա ընտանիքներ դիմել են իշխանություններին Իսրայել մեկնելու փաստաթղթերի ձեւակերպման համար: Համեմատության կարգով ասենք, որ անցած ամիս եղել է ընդամենը 1 դիմում: Կայանները հաղորդում են, որ ծայրահեղ ազգայնականների ընդվզումներ են բռնկվել նաեւ Շվեդիայում:

Ելցինը լուծարեց նախագահին կից պետքարտուղարի պաշտոնը

Բորիս Ելցինն ստորագրեց Դաշնակցային Ռուսաստանի նախագահին կից պետքարտուղարի պաշտոնը լուծարելու մասին հրամանագիրը: Ինչպես հաղորդեց պետության ղեկավարի մամուլի քարտուղար Վյաչեսլավ Կոստիկովը, այդ կապակցությամբ պետքարտուղարի պաշտոնից ազատվել է Գենադի Բուրբուլիսը: Նախագահի հրամանագրով նա նշանակվել է Ռուսաստանի նախագահին կից խորհրդականների խմբի ղեկավար: Մամուլի քարտուղարն ավելացրեց, որ լիազորված է հայտարարել, թե ժողովրդավարների համագումարի նախօրեին կադրային փոփոխությունների չափերի մասին ասեկոսներն անհիմն են:

Ա. Կոզիրեւ. «Իմ հրաժարականի մասին ասեկոսները «բացարձակ անհեթեթություն են»

Երեկ առավոտյան «ԻՏ»-ին տված հարցազրույցում Ռուսաստանի արտգործնախարար Անդրեյ Կոզիրեւը հայտարարեց, թե իր հավանական հրաժարականի մասին ասեկոսները «բացարձակ անհեթեթություն են»: Նա նշեց, որ կառավարության արտաքին քաղաքական կուրսը «մնում է անփոփոխ»: Ա. Կոզիրեւի խոսքերով, «թիմի եւ կուրսի փոփոխություն չի լինելու»: Նախարարը հաղորդեց նաեւ, որ հենց նոր է զրուցել Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի հետ, որը նույնպես «ոչ մի կասկած չի հայտնել այդ կապակցությամբ»: Ավելի վաղ Անդրեյ Կոզիրեւի հրաժարականի մասին ասեկոսները հերքել էին արտգործնախարարության լրատվության եւ մամուլի դեպարտամենտի տնօրեն Սերգեյ Յասստրժեմբսկին եւ նախագահի մամուլի քարտուղար Վյաչեսլավ Կոստիկովը:

40 հազար փախստական մտադիր է անցնել սահմանը

Նոյեմբերի 25-ին Տաջիկստանի ռազմական գործողությունների գոտիներից հեռացած մոտ 40 հազար փախստականներ մոտեցել են տաջիկ-աֆղանական սահմանի այն հատվածին, որը վերահսկվում է Ռուսաստանի սահմանապահ զորքերի Փյանջի ջոկատի կողմից: Այդ մասին հաղորդեց Միջին Ասիական սահմանապահ օկրուգի շտաբը: Ավելի ուշ Քյուլաբի զինված կազմավորումները հեռացրել են նրանց սահմանից եւ շրջապատել: Զինյալները ցանկանում էին գտել փախստականներին, որոնելով հակամարտ խմբավորումների զինված ահաբեկիչներին: Այդ կապակցությամբ փախստականների ներկայացուցիչները դիմել են սահմանապահներին: Հակառակ դեպքում նրանք սպառնացել են խանդել սահմանային փակագծերը եւ փախչել Աֆղանստան: Սահմանապահներն ու Քյուլաբի ջոկատների ներկայացուցիչները բանակցություններ են սկսել դիմակայությունը հաղթահարելու նպատակով: ■

Մշակույթ

Գծանկարի նշանավոր վարպետը

Ժանսեմ (Ժան-Հովհաննես Սեմերջյան) անունը դասկառանոով եւ երկյուղածությամբ են արտաբերում Ֆրանսիայում գեղարվեստի սիրահարները: Գծանկարի 72-ամյա այս վարպետն այսօր աղում եւ ստեղծագործում է Փարիզից 300 կմ հեռու գտնվող Սենս-Անյեն բնակավայրում գտնվող իր առանձնատանը: Նա շատ երկրպագուներ ունի նաեւ հայրենիքում. Հայաստանի ազգային դասկերասրահում եւ ժամանակակից արվեստի թանգարանում վաղուց ի վեր ցուցադրվում են նրա լավագույն գործերից շատերը: 1973-ին Ժանսեմն առաջին անգամ եկավ Հայաստան: Ծերունազարդ նկարիչն իր տվորության համաձայն այս տարի եւս բազմաթիվ աշխատանքներ նվիրեց իր հայրենիքին: Ամիսներ առաջ դրանք, թվով 50 հատ, Երեւան բերեց արվեստաբան Շահեն Խաչատրյանը: Այժմ մեր ազգային դասկերասրահում կազմակերպված է այդ գործերի ցուցահանդեսը:

Դրանց մի մասը, որ օթորներ են, փաստորեն Աստվածաշնչի նկարագրություններ են: Գրաֆիկական արվեստի այս մարզում գրի ձեւավորման մեջ, առավել ցայտուն է երեւում ուզածդ նկարչի գծանկարչական վարպետությունը: Մինչ այս գործը Ժանսեմը նկարազարդել է Սերվանտեսի ու Գարսիա Լորկայի, Ֆրանչուա Վիյոնի ու Ալբեր Կամյուի, ուրիշ այլ հեղինակների գրքերը: Սկսած ձեռագիր մատյաններում դահավոր մանրանկարներից եւ ավելի ուշ ժամանակներում դյուրերյան հայտնի ձեւավորումներից. Սուրբ գրքի նկարազարդմամբ զբաղվել են հայտնի ու անհայտ շատ նկարիչներ: Այս առումով կարեւորն այն է, որ Ժանսեմը չի կրկնում ոչ ոքի եւ ինքնատիպ է նաեւ այս դժվարին ասպարեզում: Իր անփոթելի ձեռագրով, բրթուն գծի ու անհանգիստ խորքի, լուսաստվերի միայն իրեն հատուկ վարպետ համադրումներով նկարիչն ստեղծել է անմոռաց մի դասկերաշար:

Լիտոգրաֆիայի տեխնիկայով արված մյուս նկարներում փարիզյան առօրյա կյանքն է. կաբարեներ, խանութներ, նկարչի արվեստանոց եւ այլն: Նկարիչը սիրում է դասկերել կանանց տարբեր հոգեվիճակներում եւ իրադրություններում «Պարուհին», «Հոգնած կինը», «Արտասվող կինը» եւ այլն: Իբրեւ «միզերաբլիս» հավատարիմ մնալով «բվանների երգչի» իր կոչմանը Ժանսեմը դարձյալ դասկերել է ետնախորշերի ու կիսամութ կաբարեների կանանց, որոնք մերթ իրենց մարմնով, մերթ ցուցադրած արվեստով վաստակում են օրվա հացը, ամբողջացնում Փարիզի համընդհանուր դասկերը: Այնքան տարողունակ ու բովանդակալից է Ժանսեմյան գիծը, որ այն կարծես նաեւ գույն է ճառագում, ուստի հաճախ չես էլ զգում գույնի միջամտության անհրաժեշտությունն: Այդ գիծը մի տեսակ ներքին լարում ունի իր մեջ, որով գործերին դրամատիկ շունչ ու որկվածություն է հաղորդվում:

Պատահական չէ, որ դասկերասրահի այն սրահը, որտեղ կազմակերպված է հիշյալ ցուցահանդեսը, կրում է Գծանկարի վարպետության դպրոց անվանումը: Այդ հաստատության տնօրինությունը ձեռնարկել է իր ֆոնդերում դասվող երեք հազարից ավելի գրավյուրաները հայ հանդիսատեսին ներկայացնելու հույժ կարեւոր գործը: Գծանկարի անկրկնելի վարպետ Ժանսեմի ներկա ցուցահանդեսն այդ խոշոր ձեռնարկման առաջին քայլն է միայն:

ԼԵՎՈՆ ԼԱՇԻԿՅԱՆ

ԱԶԳ - ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՌՋԵՒՈՒՄ... ՀԱՅԵՐՆ ՈՒ ՀՐԵԱՆԵՐՆ ԵՆ

Հերթական տուրում՝ Հայաստան-Ռուսաստան

Եվրոպայի բիմային առաջնության հինգերորդ տուրում Հայաստանի հավաքականի մրցակիցները Հոլանդիայի ընտրանին էին, որոնք մեր գրոսմայստերներից հետ էին մնում միայն կես միավորով: Շատ համառ դայքար ծավալվեց եւ երբ հիմնական չորս ժամից հետո զանգահարեցինք Դեբրեցեն, դեռ ոչ մի դարտիա չէր ավարտվել: Մամուլի կենտրոնում գտնվող ֆրանսահայ շախմատիստ Հարություն Հակոբյանը, որն ինչպես եւ Մանիլայի օլիմպիադայի ժամանակ հատուկ ժամանել է մեր բիմի համար ցավելու նողատակով, հայտնեց, որ իրադարձությունները հաջող են զարգանում: Արտաշես Մինասյանը որոշակի առավելություն ունի, իսկ Ռաֆայել Վահանյանի, Վլադիմիր Հակոբյանի եւ Սմբատ Լդրությանի դիրքերն առնվազն վատ չեն: Մեր կանանց հավաքականը հանդիպելով Իսրայելի բիմի հետ, ցավոք 0:2 հաշվով դարտություն կրեց:

Երբ հետում մնաց ժամանակի երկրորդ ստուգումը, այսինքն վեց ժամը, դարզվեց, որ Հայաստանի տղամարդկանց հավաքականը հասել է փայլուն հաջողության դարտության մասնակցով Հոլանդիայի բիմին: Ընդ որում, արդեն երրորդ մրցախաղն անընդմեջ մեր տղաները հաղթում են ակնհայտ առավելությամբ, նույն 3:1 հաշվով: Շատ ուրախալի է, որ գեղեցիկ դարտիա շահեց մեր բիմի առաջատար Վահանյանը՝ միակը հայ շախմատիստներից, որը Դեբրեցենում դեռ չէր ճաշակել հաղթանակի բաղդությունը: Երրորդ անընդմեջ հանդիպումը շահեց Մինասյանը: Իրենց դարտիաները հաջողությամբ ավարտեցին Հակոբյանն ու Լդությանը:

Այս տպավորիչ հաղթանակից հետո Հայաստանի հավաքականը 20 հնարավորից չլքասակեց 13,5 միավոր եւ հասավ առաջատարներին՝ Ռուսաստանի շախմատիստներին, որոնք անգլիացիների հետ խաղացին 1,5:1,5 (մեկ դարտիա հետաձգված է):

Վեցերորդ տուրում կկայանա Եվրոպայի առաջնության կենտրոնական մրցախաղը՝ Հայաստան-Ռուսաստան: Հիշեցնենք, որ Մանիլայում մեր բիմը միակն էր, որ դարտության մատնեց օլիմպիական չեմպիոններին: Ինչ կբերի այս նոր մենամարտը...

Երրորդ տեղում 13 միավորով Իսրայելի հավաքականն է: Եւ Դեբրեցենի մամուլի կենտրոնի աշխատակիցը օրիորդ Էվելինան, որից մենք ամեն օր մի բանի անգամ բարձր տեղեկություններ ենք իմանում, սրամտորեն ընդգծեց, որ առաջատարների եռյակում միայն հայերն ու հրեաներն են՝ նկատի ունենալով ոչ միայն Հայաստանի ու Իսրայելի բիմերին, այլեւ Ռուսաստանի հավաքականին, որը նույն կազմված է երկու հնագույն եւ շախմատում բացառիկ հաջողությունների հասած ժողովուրդների ներկայացուցիչներից...

Իսկ մյուս բիմերը՝ Անգլիայի, Ուկրաինայի, Բոսնիայի եւ Հերցեգովինայի, Հունգարիայի դասվիրակներն արդեն 1,5-ական միավորով զիջում են Ռուսաստանի եւ Հայաստանի շախմատիստներին: ■

Գելֆանդն արդարացնում է Տիգրան Պետրոսյանի հույսերը

Ավարտին է մոտենում Մոսկվայում անցկացվող ութ ուժեղագույն գրոսմայստերների մրցաշարը, որով եզրափակվում են աշխարհի չորրորդ չեմպիոն Ալեքսանդր Ալյոխինի ծննդյան 100-ամյակին նվիրված մարզական իրադարձությունները: Հուշամրցաշարը ՖԻԴԵ-ի ընդունած գործակիցների սանդղակով բացառիկ բարձր 18-րդ կարգի ուժ ունի: Շախմատի դասմության մեջ էա նման երկրորդ դեպքն է հոլանդական Թիլբուրգ քաղաքում հինգ տարի առաջ կազմակերպված մրցաշարից հետո: Եւ եթե ավելացնենք, որ առաջին մրցանակակիրը կվաստակի 20 հազար դոլլար եւ զգալի տարադրամ կստանա նաեւ... վերջին տեղը զբաղեցնողը, դարձ կդառնա, թե ինչու մի քանի գրոսմայստերներ հրաժարվել են նույնիսկ ելույթ ունենալ Եվրոպայի առաջնությունում՝ նախընտրելով խաղալ Մոսկվայում: Պատահական չէ, որ ութ մասնակիցներից յոթը մտնում են աշխարհի լավագույն շախմատիստների տասնյակի մեջ:

Այս շատ հզոր կազմով, բայց գերկարճատեւ մրցաշարում վերջին տուրից առաջ, վեց հնարավորից ունենալով 4 միավոր, աղյուսակը գլխավորում է հնդիկ Վ. Անանդը, բայց առաջին տեղն իր համար գործնականում ապահովել է... Բ. Գելֆանդը (Բելառուս): Հարցն այն է, որ բացի 3,5 միավորից վերջինս ունի նաեւ երկու անավարտ խաղ, որոնք նրան եւս 1,5 միավոր են խոստանում: Տեղին է հիշեցնել, որ Գելֆանդը Տիգրան Պետրոսյանի դեկավարած դդրոցի վերջին շրջանավարտներից է, եւ մեր հռչակավոր հայրենակիցը մեծ հույսեր էր կապում իր սանի հետ:

Զարմանալիորեն թույլ է հանդես գալիս աշխարհի չեմպիոնի կոչման հավակնորդներից մեկը՝ հոլանդացի Յան Թիմանը, որը երկու դարտիա ավարտելով ոչ-ոքի, տանուլ է տվել մյուս չորսը եւ «հաստատուն» զբաղեցնում է վերջին տեղը: Հիշեցնենք, որ ընդամենը մի քանի շաբաթ հետո Թիմանն անգլիացի Շորթի հետ պետք է անցկացնի հավակնորդների եզրափակիչ մրցախաղ, որի հաղթողին սպասում է Գարրի Կասպարովը:

ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կրկին փայլեց Վան Բաստենի աստղը

Մեկնարկեց ֆուտբոլի Եվրոպայի չեմպիոնների գավաթի խաղարկության եզրափակիչ փուլը: Կանոնադրության համաձայն նախորդ փուլի 8 հաղթող բիմերը վիճակահանությամբ բաժանվել են երկու խմբի, որտեղ շրջանաձեւ մրցակարգով կվիճարկվեն գլխավոր եզրափակիչի երկու ուղեգրերը: Յուրաքանչյուր խմբից եզրափակիչ է դուրս գալիս խմբի հաղթողը:

Ա խումբ. **«Օլիմպիկ»** (Ֆրանսիա), **«Գլազգո Ռեյնջերս»** (Շոտլանդիա), **ԲԿՄԱ** (Ռուսաստան), **«Բրյուգգե»** (Բելգիա):

Բ խումբ. **«Միլան»** (Իտալիա), **«Էյնդհովեն»** (Հոլանդիա), **«Պորտո»** (Պորտուգալիա), **«Գյոտեբորգ»** (Շվեդիա):

Առաջին տուրը, որ կայացավ նախորդ օրը, ցույց տվեց, որ բոլոր բիմերն էլ չցանկանալով զիջել միմյանց, դաստաբաս են դայքար մղել բաղձալի ուղեգրերի համար: Բացի դրանից ՌԻԵՖԱ-ն յուրաքանչյուր հաղթանակի համար բիմերին դարգեւատրում է 36500 շվեյցարական ֆրանկով (1.49 ֆրանկը՝ 1 դոլլար):

Ա խումբ

«Բրյուգգե»-ԲԿՄԱ՝ 1:0 (գոլը 16-րդ րոպեին խփել է Մամաշին),

«Գլազգո Ռեյնջերս»-«Օլիմպիկ»՝ 2:2 (Մակսվիլը 78, Հեյթլի 85, / Բոկսիչ 30, Ֆյոլլեր 56):

Բ խումբ

«Պորտո»-«Էյնդհովեն»՝ 2:2 (Մագալյաես 34, Պաոլեսկու (սեփ. դարպասը) / Ռոմարիո 43, 59)

«Միլան»-«Գյոտեբորգ»՝ 4:0 (Վան Բաստեն 33, 52 (11 մետր.) 61, 62):

Մեծ հետաքրքրություն էր առաջացրել Միլանի «Սան-Սիրո» մարզադաշտում կայացած «Միլան»-«Գյոտեբորգ» հանդիպումը, որի ընթացքում կրկին աչքի ընկավ Եվրոպայի 1988 թ. լավագույն ֆուտբոլիստ Մարկո Վան Բաստենը, դառնալով 4 գոլի հեղինակ:

1/8 եզրափակիչի առաջին խաղերն անցկացրին նաեւ ՌԵՖԱ-ի գավաթը վիճարկողները: Ահա արդյունքները.

«Դինամո» (Ռուսաստան) - **«Բենֆիկա»** (Պորտուգալիա) **2:2**

«Այաքս» (Հոլանդիա) - **«Կայզերսլաուտերն»** (Գերմանիա) **2:0**

«Ստանդարտ» (Բելգիա) - **«Օսեր»** (Ֆրանսիա) **2:2**

«Ռոմա» (Իտալիա) - **«Գալաթասարայ»** (Թուրքիա) **3:1**

«Սիգմա» (Չեխոսլովակիա) - **«Յուվենտուս»** (Իտալիա) **1:2**

«Պարի Սեն Ժերմեն» (Ֆրանսիա) - **«Անդերլեխտ»** (Բելգիա) **0:0**

«Բորուսիա» (Գերմանիա) - **«Սարագոսա»** (Իսպանիա) **3:1**: ■

Ծանրամարտը դեռ է դնում է նոր դարաշրջան

Իսպանական Սանտա-Կրուս-դե-Տեներիֆե քաղաքում կայացած ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի (ԻՎՖ) կոնգրեսը որոշել է 1993 թ. հունվարի մեկից ծանրամարտում մտցնել նոր քաշային կարգեր եւ համաշխարհային ռեկորդների նոր հաշվարկ: Այսպես տղամարդիկ այժմ կմրցեն հետեւյալ քաշային կարգերում. մինչեւ 54 կգ (նախկինը՝ 52), 59 (56), 64 (60), 70 (67,5), 76 (75), 83 (82,5),91 (90), 99 (100), 108 (110) եւ 108-ից ավել (110):

Կանանց մրցումներում քաշային կարգերը հետեւյալն են. մինչեւ 46 կգ (44), 50 (48), 54 (52), 59 (56), 64 (60), 70 (67,5), 76 (75), 83 (82,5) եւ 83-ից ավելի (82,5):

Այս նորամուծությունը մտցված է հիմնականում մարզիկների կողմից դոպինգ եւ առաջին հերթին անաբոլիկներ օգտագործելու դեմ պայքարելու համար: Հիշեցնենք թեկուզ սեուլյան օլիմպիադայի ժամանակ բուլղարացի ծանրորդների հետ կապված միջադեպը, որտեղ Ոռանք զրկվեցին մեդալներից: Այդ բանից հետո էր, որ ՄՕԿ-ում խոսակցություններ եղան ծանրամարտն ընդհանրապես օլիմպիական ծրագրից հանելու մասին: Այժմ միջազգային ֆեդերացիան անխնա պայքար է սկսել դոպինգի օգտագործման դեմ:

Եւ դրա համար էլ ԻՎՖ-ն ընդունեց քաշային կարգերը փոփոխելու որոշումը: Մի խոսքով, ծանրամարտում սկսվում են նոր ժամանակներ:

ԱՇՈՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Տնտեսություն

Կյանքը դադարեցնել մինչեւ գարուն

Տեղաց առաջին ձյունը, եւ ինչպես միշտ, գրեթե մեզ տհաճ անակնկալ մատուցեցին:

Քաղաքում ջեռուցում լինելո՞ւ է, թե ոչ: *«Չեմ կարող ասել: Եթե գազի մուտքը Հայաստան չավելանա, ջեռուցում չի լինի,* ասում է Երեւանի քաղխորհրդի նախագահի առաջին տեղակալի պաշտոնակատար Կարապետ Ռուբինյանը: *Իսկ այսօր ստացվող գազի ծավալներով գործնականում ջեռուցում կազմակերպել հնարավոր չէ: Վրաստանն օրական ստանում է 28 մլն խմ գազ, որի մի չնչին մասն է հասնում Հայաստան: Մեր հարեւանը, եթե պարզ խոսենք, չի պահպանում նախատես ձեռք բերված պայմանավորվածությունները»:* Իսկ կառավարությո՞ւնը, մի՞թե նա ոչինչ չի ձեռնարկում, այս ուղղությամբ:

«Կառավարությունում այժմ քննարկվում են զանազան առաջարկներ ամենաանհեթեթից մինչեւ հնարավորը, տեղեկացնում է պրն. Ռուբինյանը: *Օրինակ, պարբերական ռեժիմով գազ ու ջեռուցում առաքվել Հայաստանի շրջաններին հերթականությամբ (ասենք այս շաբաթ ողջ գազը տալ Գյումրիին եւ այդ հանակով նաեւ ջեռուցում առաքվել, հաջորդ շաբաթ Վանաձորին եւ այլն): Սակայն նա հիշ հավանական տարբերակ է»:*

Մի բան պարզ է. կյանքը պարբերացման օրենքներին չի ենթարկվում: Ուրեմն ի՞նչ, մեր բնակիչներին մնում է աջի պես մինչեւ գարուն մտնել եւ կյանքը շարունակել բուսական եւ կենդանական աշխարհի արքանալու հե՞տ: ■

Քարեր

13 խաղատներ Երեւանում

Այսօր Երեւանում կան 13 խաղատուն եւ մի քանի տասնյակ խաղարահներ «միձեռնանի ավազակներով»: Խաղասեղանիկները, ոչուտախաղերը, խաղաթղթերը եւ խաղատան համար անհրաժեշտ այլ հնսարակ սարքավորումները բերվում են Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից եւ ԱՄՆ-ից: Բանկ բոնողները, կամ ինչպես նրանց անվանում են այսօր «դիլերները», հիմնականում Ռուսաստանից եւ Մերձբալթիկայից ժամանած պրոֆեսիոնալ աղջիկներ են, չնայած քաղաքի ամենահեղինակավոր երկու խաղատներում պայմանագրով աշխատում են երեք ամերիկացիներ (ոչ հայեր): Սակայն տեղական կադրերն արագորեն տիրապետում են այդ մասնագիտությանը, ինչին նպաստում է այն փաստը, որ նրանցից գրեթե բոլորն ունեն բարձրագույն կրթություն:

Երեւանի դիլերների տարիքը 20-40 է, իսկ խաղատների հաճախորդներինը 30-60: Մուտքը խաղատուն արժե մինչեւ 1000 ռուբլի, չնայած մի քանի տեղերում մշտական հաճախորդներին տրվում են անվճար այցելության այցեքարտեր: Խաղագումարի ժետոնները արժեն 500-ից մինչեւ 10 հազար ռուբլի: Խաղատան աշխատանքի ժամերն են 14-21-ը (առաջին հերթափոխ) եւ 21-ից մինչեւ առավոտվա 5-ը (երկրորդ հերթափոխ): Մեկ խաղատան միջին շրջանառությունն օրական մոտ 3 միլիոն ռուբլի է եւ մոտ 5 հազար դոլար:

Ինչպես հաջողվեց իմանալ «Սնարֆ»ին, Երեւանի խաղատների քանակը հակառակ համեմատական է նրանց տերերի քանակին: ■

Էլչիբեյը վտանգավո՞ր է Ադրբեջանի համար

Հայաստանի վարչակազմի բարձրաստիճան գործիչներից մեկը հայտնեց, թե Հայաստանի եւ Ղարաբաղի հանդեպ Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականությունը շարունակելու դեպքում նախագահ Էլչիբեյը չարյաց փոքրագույնն է, քանի որ հակված է մղումային եւ անհամաչափ գործողությունների, ինչը վաս է ընդունվում ժամանակակից համաբխարհային քաղաքականության մեջ: *«Էլչիբեյը վտանգավոր է Ադրբեջանի համար, նա առանց որեւէ հիմնավորման Խոմեյնիին է նմանակում, սակայն կավարտի իր գործունեությունը որպես Գամսախուրդիա»,* ասաց Հայաստանի ղեկավարության ներկայացուցիչը: ■

Ընդհ

Պոլտորանինը հրաժարական է տալիս

Նոյեմբերի 25-ին Դաշնակցային Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինն ստորագրեց Միխայիլ Պոլտորանինին «իր իսկ խնդրանքով» փոխվարչապետի եւ մամուլի ու լրատվության նախարարի պաշտոնականություններից ազատելու մասին հրամանագիրը: Ինչպես հաղորդեց նախագահի մամուլի քարտուղար Վյաչեսլավ Կոստիկովը, Մ. Պոլտորանինը, հիմնավորելով իր խնդրանքը, դիմել է այդ քայլին Ռուսաստանի նախագահին ընդդիմության կողմից ուժեղացող մեղադրանքներից զերծ պահելու նպատակով, ինչպես նաեւ զանգվածային լրատվության միջոցների գործունեությանը վերաբերող մի շարք այլ հանգամանքների կարգավորմամբ: ■

Մի՞թե

«Վնասակար» արտասահմանցիներ

Հայաստանի ղեկավարությանը մոտ շրջանակներում գտնում են, թե արտասահմանյան քաղաքացիներին արտաքին քաղաքականության կարեւոր պաշտոններին նշանակելը վնասել է հանրապետության ազգային շահերին: Օրինակ է բերվում, թե ինչպես ԱՄՆ-ի քաղաքացի Ռաֆֆի Հովհաննիսյանին ԱԳ նախարար նշանակելու հաջորդ օրն իսկ Ռուսաստանի ԱԳՆ-ն գաղտնի հուշագրեր ու շրջաբերականներ էր ուղարկում ՀՀ ԱԳՆ-ին, որոնք անմիջապես ուղարկվում էին նախագահին: Նույն պատճառով, ինչպես կարծում են այդ շրջանակներում, որոշակի դանդաղկոտություն էր դիտվում Իրանի եւ արաբական պետությունների հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու մեջ: ■

Հայաստանի ամուլը «մատնի՞չ»

Հայաստանի կառավարական շրջանակներում գտնում են, որ խոսքի ազատությունն արդեն հակասության մեջ է մտնում հանրապետության ազգային անվտանգության շահերի հետ: Օրինակներ են բերվում, երբ Ադրբեջանի կողմից Հայաստանի եւ Ղարաբաղի ռմբակոծումների եւ գնդակոծումների մասին թերթերի եւ հեռուստատեսության հաղորդագրություններն օգնում են հակառակորդին կանոնավորել կրակը:

Այնուամենայնիվ, ինչպես պարզեց «Սնարֆ»ի թղթակիցը, Հայաստանի կառավարությունը մտադիր չէ միջոցառումներ ձեռնարկել մամուլի ազատությունը լրջորեն սահմանափակելու համար: ■

Լուրերի Հոսք

«Մնացած զենքը վաճառվել է հայերին»

Ինչպես հայտնի է, վերջերս կազմալուծվել է Ախալքալաքում տեղակայված Ռուսաստանի 10-րդ մոտոհրաձգային զորամիավորումը, իսկ զենքը հանձնվել է Վրաստանին: Այդ կապակցությամբ Վրաստանի պաշտպանության նախարար Թենգիզ Կիտովանին հայտարարեց, թե այդ զենքով հնարավոր է զինել «ոչ թե զորամիավորում, այլ լավագույն դեպքում մեկ գումարտակ»: Վրաստանին է հանձնվել միայն համազգեստ եւ 60 տանկ, ասաց նախարարը, նոյեմբերի 25-ին ելույթ ունենալով խորհրդարանում: Նրա խոսքերով, մնացած ամբողջ զենքը, այդ թվում հրաձգային, վաճառվել է հայերին: Թ. Կիտովանին նշեց, որ Վրաստանի զինված ուժերի տրամադրության տակ գտնվող զենքի մեծ մասը գնվել է հանրապետության միջոցներով:

«Օստանկինո»ի նոր նախագահը

Նոյեմբերի 25-ին Դաշնակցային Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի հրամանագրով «Օստանկինո» հեռուստաադիոընկերության պաշտոնակատար է նշանակվել Մոսկվայի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու 38-ամյա Իգոր Մալաշենկոն: Այդ մասին հաղորդեց պետության ղեկավարի մամուլի քարտուղար Վյաչեսլավ Կոստիկովը: Ի. Մալաշենկոն սովորել է Մոսկվայի պետհամալսարանի աստիրանտուրայում, աշխատավորվել է ԽՍՀՄ արտգործնախարարությունում, աշխատել ԱՄՆ-ի եւ Կանադայի ինստիտուտում, եղել է ԽՄԿԿ ԿԿ ավագ ռեֆերենտ: 1991 թ. «Օստանկինո»ի քաղաքական տնօրենն էր:

Ռուբլու կուրսը փոքր-ինչ աճել է

Նոյեմբերի 26-ին Մոսկվայի միջբանկային վալյուտային բորսայի սակարկության ժամանակ ռուբլու կուրսը փոքր-ինչ աճել է՝ 447 ռուբլի 1 դոլարի դիմաց: Վաճառվել է 29 միլիոն 350 հազար դոլար: Նոյեմբերի 24-ին կայացած սակարկության ժամանակ գրանցվել էր 450 ռուբլի 1 դոլարի դիմաց կուրսը:

Գամսախուրդիան ճանապարհորդում է

Ինչպես «Սնարֆ»ի թղթակցին հայտնի դարձավ իրազեկ աղբյուրներից, Վրաստանի նախկին նախագահ Զվիադ Գամսախուրդիան հեռացել է Չեչնիայից եւ այժմ գտնվում է Թուրքիայում: Նախատեսվում է, որ նա կայցելի նաեւ մի շարք եվրոպական երկրներ: Գամսախուրդիայի հանկարծակի ճանապարհորդության նպատակը գաղտնի է պահվում:

Սահմանադրական դատարանը հրապարակում է կենտկոմի գործի որոշումը

Նոյեմբերի 30-ին Սահմանադրական դատարանը կհրապարակի կոմկուսի եւ նրա վերաբերյալ նախագահի հրամանագրերի օրինականությունը ստուգելու գործի մասին իր որոշումը: Սահմանադրական դատարանի մամուլի ծառայությունը տեղեկացնում է նաեւ, որ այդ նիստին դատարանը կքննարկի Ազգային փրկության ճակատի կազմկոմիտեի լուծարման մասին ելցինի հրամանագրի օրինականության հարցը: ■

Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
Apple® Macintosh®
համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի
Azg armenian daily
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

BUSINESS TO BUSINESS

«ՎԵՐՏԵՔՍ ՎԵՆՉԸՐՍ» ՍՊԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԴՈՒՍՏՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

YELLOW PAGES

ԴԵՂԻՆ ԷՋԵՐ

The only official Telephone Directory being jointly prepared by the Yerevan City Council and Vertex Ventures LTD, a New York Corporation.

The directory will contain the addresses and telephone numbers of all businesses registered in Yerevan together with various advertisements.

The directory will be published both in Armenian and in English and will be sold in Armenia and throughout the world.
Your advertisements will expand your business and will introduce it throughout various world markets.

If you desire to have your business known internationally, then place your advertisements in the only official Yerevan telephone Directory, being prepared jointly by the Yerevan City Council and Vertex Ventures LTD, a New York Corporation.

Միակ պաշտոնական տեղեկագիրքը, որը համատեղ պատրաստվում են հրատարակելու Երեւանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեն եւ ամերիկյան «ՎԵՐՏԵՔՍ ՎԵՆՉԸՐՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Տեղեկագրքում տեղ կգտնեն Երեւանի բոլոր ձեռնարկությունների հասցեները եւ հեռախոսահամարները, ինչպես նաեւ այլազան գովազդներ ձեռնարկությունների եւ նրանց գործունեության մասին:

Տեղեկագիրքը լույս կտեսնի հայերեն եւ անգլերեն լեզուներով, կվաճառվի Հայաստանում եւ ամբողջ աշխարհում:

Տեղեկագրքում տեղ գտած գովազդները հնարավորություն կընձեռեն գործարար մարդկանց եւ ձեռնարկություններին դուրս գալու միջազգային շուկա եւ ընդլայնելու գործարար կապերը:

Եթե դուք ցանկանում եք, որ Ձեր գործունեության մասին իմանան ամբողջ աշխարհում, ապա տեղավորեք Ձեր գովազդը տեղեկագրքում, որը միակ պաշտոնականն է եւ համատեղ պատրաստվում է Երեւանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի եւ ամերիկյան «Վերտեքս վենչըրս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից:

Apply at Vertex Ventures LTD,
Address: Tamanian st. 2, Yerevan-9
tel. 56-06-05, hours 9.00-17.00
55-27-52, hours 17.30-21.30

Դիմել ամերիկյան «Վերտեքս վենչըրս» ՍՊԸ Հայաստանի դուստր ձեռնարկությանը:
Հասցեն Երեւան-9, Թամանյան-2
Հեռախոս 56-06-05 ժամը 9.00-ից - 17.00,
55-27-52 ժամը 17.30-ից - 21.30:

VERTEX VENTURES
ARMENIAN SUBSIDIARY LTD. CORPORATION • NEW YORK-YEREVAN

PUBLISET

31 Հանրապետության խորհրդի պողոտա «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան 23 Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Պատվեր 69149. Տպաքանակ 20 000 Պատվեր 1591. Ստորագրված է տպագրության 26.11.1992

digitised by A.R.A.R.@